

865

004

S-30

30.
S —

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1913 ԹՈՒԻ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

•••••

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵՇՐԱՆ



004
S-30

Թ Ի Ֆ Լ Ի Ձ
Տպարան Ն. Աղանեանի, Պոլից. 7
1 9 1 4

865

004
5-30 47

03 JUN 2005

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ


ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1913 ԹՈՒԻ

ԳՐԻՇՈՒՆԷՈՒԹԵԱՆ

•••••

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵՇՐՋԱՆ



ԹԻՖԼԻՉ

Տպարան Ն. Աղանեանի, Պոլից. 7

1914

13 AUG 2013

03 JUL 2008

ՀԱՅ ԳՐԱԴՆԵՐԻ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1913 թվական

ՆԱԽԱԶԱՆԱԾ

ՀԱՅ ԳՐԱԴՆԵՐԻ



1403-51

ՀԱՅ ԳՐԱԴՆԵՐԻ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1913 թվական

ՆԱԽԱԶԱՆԱԾ

2-6

Հայ Գրողների Կովկասեան

Ն Ա Խ Ա

ՄՈՒՏՔ

	Բ.	Կ.
1. Անդամավճարներ	500	—
2. Դասախօսութիւններից և երեկոյթներից	100	—
3. Ներկայացումից և համերգներից	500	—
4. Նուիրատուութիւններ	3000	—
5. Տոկոսներ	25	—
	<u>4125</u>	—

Ընկերութեան 1913 թ.

Հ Ա Ձ Ի Ի Ը

ԵԼՔ

	Բ.	Կ.
1. 25% հիմնական դրամագլուխ	1031	25
2. Փոխառու գումար	806	87
3. Օժանդակութեան գումար	806	88
4. Գրասենեակի վարձ	300	—
5. Գործավարի ոտճիկ	360	—
6. Կահ կարասիք	500	—
7. Դիւանական ծախսեր	200	—
8. Ծառայի ոտճիկ	120	—
	<u>4125</u>	—

Ընկերութեան սկզբնաւորութիւնը

Իննսնական թուականներին, հայ մամուլի և գրական շրջանների մէջ առաջին անգամ սկսուեց արծարծուել հայ գրողներին օգնելու գաղափարը: Այդ մտքին առաջին զարկ տուողը եղաւ հանգուցեալ բանաստեղծ Սմբատ Շահազիզը, որ մի գումար կտակեց յատուկ այդ նպատակով և որից տարիներ շարունակ օգտուում էին մի շարք հայ գրողներ: Սակայն այդ գործը կատարւում էր տնային կերպով և առաջինը Աւետիք Արասխանեանն էր, որ մտածեց գործին լուրջ կազմակերպութիւն տալ, հիմնելով մի Ընկերութիւն: Այս նպատակով նա, գրական շրջանների հետ խորհրդակցելով, կազմեց մի կանոնադրութիւն (1892 թ.) և ներկայացրեց պատշաճաւոր իշխանութեան ի հաստատութիւն: Սակայն շնորհիւ աննպաստ պայմանների՝ այդ կանոնադրութիւնը չհաստատուեց:

Բայց գաղափարը շարունակում էր ապրել և հետաքրքրել գրական շրջաններին: Տարիների ընթացքում տեղի ունեցան մի շարք խորհրդածութիւններ հայ գրողների ընկերութեան համար կանոնադրութիւն մշակելու: Բայց դարձեալ գործը մնաց անկատար:

Այդ հարցի իրագործմանը մեծապէս զարկ տուեց Հայոց տպագրութեան 400 ամեակի յօրեկանի խնդիրը, որ կովկասահայերի մէջ առաջին անգամ իր ձեռքն առաւ Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը և իր նախաձեռնութեամբ այդ առթիւ հրաւիրած առաջին Ընդհանուր Ժողովում, որ բաղկացած էր Թիֆլիսում գործող դպրոցական, կուլտուրական և տպագրական հաստատութիւնների ու մամուլի ներկայացուցիչներից, ընտրեց 15 հոգուց բաղկացած Յոբելեանական Յանձնաժողով, յանձնարարելով՝ նրան ի յաւերժացում այդ մեծ Յոբելեանի հիմնել գրական ֆօնդ:

Յոբելեանական Մասնաժողովը ցանկանալով օրինականացնել այդ գեղեցիկ գաղափարը և միաժամանակ իրագործել հայ գրական շրջանների վաղեմի իղձը, որոշեց կազմել Հայ Գրողների Ընկերութիւն, որի կանոնադրութիւնը, ձևելով Թիֆլիսի ժողովրդականների և գրողների Ընկերութեան կանոնադրութեան վրայ, ներկայացրեց Ընդհանուր Ժողովին և, սրա հաւանութիւնը ստանալուց յետոյ, 1912 թուի յունիսի 18-ին ներկայացրեց պատշաճաւոր իշխանութեան: Կանոնադրութիւնը նոյն թուի օգոստոսի 2-ին հաստատուեց կառավարութեան կողմից և հիմնադիրները 1912 թ. հոկտեմբերի 3-ին հրաւիրելով առաջին Ընդհանուր Ժողովը՝ «Հայ Գրողների Կովկասեան Ընկերութիւնը» յայտարարեցին պաշտօնապէս բացուած:

Ընկերութեան կազմը

Այդ նոյն ժողովում ընտրուեց Վարչութեան հետեւեալ կազմը.

1. Յովհաննէս Թումանեան (նախագահ)
2. Առաքել Բաբախանեան
3. Բժ. Արիսակէս Զարգարեան (գանձապահ)
4. Տիգրան Յովհաննիսեան (փոխ-նախագահ)
5. Աւոս Աթանասեան
6. Գիւտ Աղանեան ա. ք. (քարտուղար)
7. Արեակ Յարութիւնեան
8. Երուանդ Լալայեան

Այս կազմը իր լրութեամբ պաշտօնավարեց 1912 թ. հոկտեմբեր 12-ից մինչև 1913 մարտ 31-ը, որից յետոյ եղան հետեւեալ փոփոխութիւնները.

1913 թ. մարտին հրաժարուեց պ. Երուանդ Լալայեանը և մարտ 31-ին նրա փոխարէն հրաւիրուեց փոխանգամ Յակոբ Ալիխանեանը:

1913 թ. ապրիլի վերջին Վարչութեան անդամ պ. Տիգրան Յովհաննիսեանը Թիֆլիսից փոխադրուեց Բաղու:

1913 թ. նոյեմբերի սկզբին հրաժարուեց Վարչութեան անդամ-գանձապահ Բժ. Ա. Զարգարեանը և նոյն նոյեմբերի 14-ին Վարչութեան անդամ ընտրուեցան պ.պ. Մինաս Բերբերեանը և Նիկողայոս Աղբալեանը, իսկ գանձապահի պարտաւորութիւնը Ընդհանուր Ժողովը դրեց Վարչութեան անդամ պ. Յակոբ Ալիխանեանի վրայ:

1913 դեկտեմբերի սկզբին Վարչութիւնից հրաժարուեց պ. Յ. Ալիխանեանը՝ երկար ժամանակով քաղաքից բացակայելու պատճառով և Ընդհանուր Ժողովը նոյն ամսի 17-ին նրա տեղ ընտրեց անդամ-գանձապահ պ. Ա. Նուշաւան Աբովեանցին:

Վարչութեան առաջին իսկ նիստում որոշուեց ժողովներ ունենալ շաբաթը մի անգամ:

Վարչութիւնը 1912 թ. հոկտեմբեր 16-ից մինչև 1913 թ. դեկտեմբերի 31-ը ունեցել է 38 նիստ:

Նիստերին Վարչութեան անդամները ներկայ են եղել.

Յովհաննէս Թումանեան	37 անգամ
Գիւտ Աղանեան ա. ք.	35 »
Արշակ Յարութիւնեան	29 »
Աշոտ Աթանասեան	26 »
Առաքել Բաբախանեան	22 »
Բժ. Արիստակէս Զարգարեան	20 »
Տիգրան Յովհաննիսեան	14 »
Երուանդ Լալայեան	10 »

Յակոբ Ալիխանեան

Նիկողայոս Աղբալեան

Մինաս Բերբերեան

Անուշաւան Աբովեան

19 անգամ

5 » (նոյեմ. 20-ից)

4 » (նոյեմ. 20-ից)

1 » (դեկտ. 19-ից)

Գրական Ժօն

Ի նկատի ունենալով, որ Հայ Գրողների Ընկերութեան ամենազլխաւոր գործը լինելու էր գրական ֆօնդի կազմակերպութիւնը, որի նպատակն է նպաստել իր անդամներին և նրանց ընտանիքներին՝ տալով նրանց թէ օժանդակութիւն և թէ փոխառութիւն, Վարչութիւնը հիմք ընդունելով ուսաց մէջ յայտնի Общество вспомоществованія нуждающимся литераторамъ и ученымъ (литературный фондъ) կանոնադրութիւնը՝ մշակեց իր գրական ֆօնդի կանոնադրութիւնը, որը ընդունուեց ընդհանուր ժողովի կողմից ի գործադրութիւն:

Այդ գաղափարը ջերմ համակրութիւն գտաւ հասարակութեան լայն շրջանների կողմից և հէնց առաջին ամիսներում եղան խոշոր նուիրաբերութիւններ այդ նպատակով: Եւ տարուայ ընթացքում այնքան աճեց գրական ֆօնդի գումարը, որ Վարչութիւնը հնարաւոր գտաւ իրագործել ֆօնդի նպատակները, թէ օգնելով չքաւոր գրագէտներին և թէ փոխառութիւն տալով:

Երեկոյթներ

Հայ Գրողների Ընկերութեան միամեայ գործունէութեան մէջ առանձնապէս շեշտելու է պարբերական (հինգշաբթի օրերի) գրական երեկոյթների կազմակերպութիւնը: Այդ երեկոյթները նպատակ ունէին թէ Ընկերութեան անդամներին, թէ հետաքրքրուող հասարակութեան լայն խաւերին և թէ ուսանող աշակերտութեանը դասախօսութիւնների միջոցով ծանօթացնել հայ գրականութեան զանազան շրջանների և գրական նշանաւոր դէմքերի գործունէութեան հետ: Բացի գրանից Վարչութիւնը որոշեց ունենալ նաև գիտական բովանդակութեամբ երեկոյթներ:

Այդ լայն ծրագիրը իրագործելու համար հրաւիրուեցան գրականութեանը և շօշափուող հարցերին հմուտ անձինք որպէս դասախօսներ թէ Ընկերութեան անդամներից և թէ կողմնակի անձերից: Դասախօսութիւններից յետոյ տեղի էին ունենում շօշափուող հարցերի շուրջը ընդդիմախօսութիւններ և մտքերի կենդանի փոխանակութիւն: Իսկ մէջ ընդ մէջ երբեմն տեղի էին ունենում զանազան արտասանութիւններ, երգեր, նուագածութիւն և փոքրիկ ներկայացումներ:

Տարուայ ընթացքում Ընկերութիւնը ունեցել է 21 պարբերական երեկոյթ, որոնք են՝

1913 թ.	Դասախօսի անունը:	Նիւթը:
Յունւր. 31	պ. Նիկողայոս Աղբալեան	Շանթի երգերը:
Փետր. 7	Զրոյց	Դատից յետոյ:
» 10	պ. Առաքել Բաբախանեան	Հայերն ու քրդերը և նրանց յարաբերութիւնները:
» 15	պ. Մ. Վանեցեան	Յովհաննէս Յովհաննիսեան
» 28	պ. Ա. Յարութիւնեան	Աւետիք Իսահակեան
Մարտի 7	պ. Ա. Յարութիւնեան	Դասախօսութեան շարունակութիւնը
» 14	պ. Ն. Աղբալեան	Սայեաթ Նովա
» 21	պ. Տ. Յովհաննիսեան	Կանանց հարցը
» 28	պ. Տ. Յովհաննիսեան	Դասախօսութեան շարունակութիւնը
Ապրիլ 25	պ. Ա. Բաբախանեան	Բաֆֆի
Մայիս 9	պ. Մամբրէ Մատէնճեան	Ռափայէլ Պատկանեան
» 16	պ. Մ. Մատէնճեան	Դասախօսութեան շարունակութիւնը
» 24	Զրոյց	Ծերենցին նուիրուած
Նոյեմբ. 7	պ. Գասպար Իփեկեան	Տաճկահայ գրականութեան մասին
» 14	պ. Աշոտ Աթանասեան	Արտագաղթը և նրա պատճառները
» 21	պ. Մամբրէ Մատէնճեան	Գրիգոր Զոհրապ
» 27	պ. Վարդգէս Ահարոնեան	Վահան Տէրեան
Դեկտ. 5	պ. Յով. Թումանեան և պ. Լէօ	Նոր լուսարանութիւններ Խ. Արովեանի և Սայեաթ Նովայի կեանքից
» 12	պ. Մինաս Բերբերեան	Նոր փաստաթղթեր Միք. Նալբանդեանի կեանքից
» 19	Զրոյց	Միտումներ գրականութ. մէջ
» 26	պ. Առաքել Բաբախանեան	Գրիգոր Արծրունի

Վարչութիւնը, համաձայն Ընդհանուր ժողովի որոշման, առանձին մասնաժողով ընտրեց իրագործելու Ընկերութեան անդամների համար ընտանեկան երեկոյթներ կազմակերպելը՝ իբրև գրական ժամանց: Բայց այդ նպատակը մինչև այժմ չիրագործուեց յարմարաւոր բնակարան չգտնելու պատճառով:

Երեկոյթներն աւելի մեծ չափով հասարակութեան մատչելի անելու նպատակով՝ Վարչութիւնը կարգադրեց, որ տարեկան արժանացրած տոմսակներ վաճառուեն ցանկացողներին՝ տղամարդկանց 5 ռուբլիով, իսկ կանանց՝ 3 ռուբլի վճարով և որոշեց ոչ-սովորական երեկոյթներին որոշ չա-

փով ձրի տոմսեր տալ Ներսիսեան, Յովհաննեան և Գայիանեան ուսումնարանների և Բարեգործական Ընկերութեան որբանոցի աշակերտ-աշակերտուհիներին:

Ա. Արասխանեանի Ֆօնդ

Նոյեմբերին Ախալքալակում վախճանուեց «Մուրճի» խմբագիր-հրատարակիչ հրապարակախօս Աւետիք Արասխանեանը: Վարչութիւնը համարելով հանգուցեալին Գրողների Ընկերութեան գաղափարի հիմնադիրներից մէկը՝ իր պարտքը համարեց ջերմ մասնակցութիւն ունենալ նրա թաղման և յիշատակը յաւերժացնելու գործում. ուստի և հիմնեց նրա անունով ֆօնդ՝ նրա անտիպ աշխատութիւնները տպելու համար: Այդ ֆօնդի անունով Վարչութիւնը ստացել է մի փոքրիկ գումար, իսկ Ընկերութիւնը իր կողմից որոշեց յատկացնել երկու հարիւր ռուբլի:

Սայեաթ-Նովան և նրա մահարձանը

Վարչութեան հոգացողութեան առարկայ եղաւ 18-րդ դարի նշանաւոր հայ երգիչ-բանաստեղծ Սայեաթ-Նովան, որի գերեզմանը Թիֆլիսի Հայոց Կաթողիկէ եկեղեցու բակում մնում էր առանց տապանաքարի: Յանկանալով Սայեաթ-Նովայի երգերն ու յիշատակը վերակենդանացնել հայ հասարակութեան մէջ և մի յուշարձան կանգնել, Վարչութիւնը որոշեց ա, մահարձան կանգնել նրա գերեզմանի վրայ, բ, յատուկ երեկոյթներ կազմակերպել լայն հասարակութեան համար և գ, հրատարակել նրա երգերը և արժան գնով տարածել ժողովրդի մէջ:

Մահարձանը որոշ մակագրով և վանդակապատով պատրաստեց յայտնի Վիլլա և Բիցցի քանդակագործ ֆիրման, պ. Բաշինջաղեանի հսկողութեամբ և պ. Ռ. Մարտիրոսեանի կազմած նախագծով:

Սայեաթ-Նովային նուիրած երեկոյթը հայ աշուղական խմբերի մասնակցութեամբ առաջին անգամ կազմակերպուեց Թիֆլիզի ժողովարանում 1913 թուի ապրիլի 5-ին, ունեցաւ արտակարգ յաջողութիւն, որ և հասարակութեան խնդրով մայիսի 25-ին կրկնուեց երկրորդ անգամ նոյն յաջողութեամբ:

Այդ երեկոյթները, շնորհիւ իրենց հետաքրքրութեան՝ արձագանք գտան թէ Թիֆլիսում և թէ ուրիշ հայաբնակ վայրերում, ուր կազմակերպուեցին նման երեկոյթներ նուիրուած մեծ երգչին:

Ընկերութեանս կազմակերպած երեկոյթների եկամուտի մի մասը, ինչպէս և այդ անունով ստացուած յատուկ նուիրաբերութիւնները գործադրուեցին մահարձանի կառուցման և Սայեաթ-Նովայի երգերի տպագրութեան վրայ:

Երգերի ժողովածուն հանգուցեալ Գէորգ Ախվերդեանի խմբագրութեամբ և մի քանի յաւելումներով հրատարակուեց ընտիր տպագրութեամբ, մահարձանի լուսանկարով և հեղինակի մի քանի ֆաքսիմիլներով:

Հեղինակի իրաւունք

Ի նկատի ունենալով որ զանազան անձինք առանց նախապէս հեղինակից իրաւունք խնդրելու՝ հրատարակում են նրանց գրուածքները, շատ անգամ աղաւաղելով և այդպիսով շահագործում հեղինակի անունն ու իրաւունքը՝ Վարչութիւնը Ընդհանուր ժողովի հաւանութիւնը ստանալով ընտրեց մի յանձնաժողով, որին և յանձնեց մի գեկուցում պատրաստել այդ խնդրի մասին, որով ապագայում հնար լինի այդպիսի երևոյթների առաջն առնել, ի նկատի ունենալով պետական գործող օրէնքները և միջազգային գրական կոնվէնցիան:

«Իււան Հայոց գրականութեան»

Վարչութիւնը ցանկանալով կորստից ազատել հին հայ գրական գործիչների անտիպ գրուածքներն ու զանազան յիշատակարանները, որոշեց ձեռնարկել մի ժողովածուի հրատարակութեան «Իււան Հայոց գրականութեան» անունով, որի համար արդէն մշակած ծրագիրը ներկայացնելու է առաջիկայ Ընդհանուր ժողովի քննութեան:

Վարչութեան մի ամուլայ արձանագրութիւնների կորուստ:

Վարչութեանս գործաւարութեանը մասամբ արգելք հանդիսացաւ հետեւալ միջադէպը. անդամ-քարտուղարը Հրատարակչական Ընկերութեան գործերով հարկադրուած լինելով քաղաքից բացակայել 1912 թուի նոյեմբերի 9-ից մինչև նոյն թուի դեկտեմբերի վերջերը՝ նրա փոխարէն քարտուղարի պաշտօնը յանձն առաւ կատարել Վարչութեան անդամ պ. եր. Լալայեանցը: Վերջինիս օրօք տեղի ունեցաւ հանգուցեալ գրող Աւետիք Արսիսեանեանցի դիակի տեղափոխութիւնն ու թաղումը, որի համար և Վարչութիւնս մի քանի ժողով ունեցաւ Ազգագրական Ընկերութեան դահլիճում: Պ. Լալայեանը իր օրօք տեղի ունեցած նիստերի արձանագրութիւններից յանձնել է Վարչութեանս միայն երկուսը, իսկ մնացեալ նիստերի օրագրերը, չնայելով Վարչութեանս նրան արած գրաւոր դիմումներին և Ընդհանուր ժողովի որոշումներին, մինչև այժմ էլ անհնար եղաւ ստանալ նրանից, որով այն նիստերի որոշումները կարելի չեղաւ արձանագրել այս տեղեկագրի մէջ:

Մասնակցութիւն հասարակական հանդէսներին

Վարչութիւնս մասնակցել է հետեւալ հասարակական հանդէսներին.

ա, Շնորհաւորել է բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեանի 25-ամեայ գրական գործունէութեան յօրելեանը, կազմակերպելով նրա անուան մի գրական երեկոյթ և պատգամաւոր ու ոսկէ գրիչ ուղարկելով:

բ, Շնորհաւորել է նկարիչ Յարութիւն Շամշինեանի 25-ամեայ և դերասան Գ. Տէր-Դաւթեանի 35-ամեայ յօրելեանները՝ պատգամաւորներ ուղարկելով յօրելեանական հանդէսներին:

գ, Հեռագրով ցաւակցութիւն է յայտնել «Русск. Вѣдомости» լրագրի խմբագրութեան՝ նրա խմբագիր Սորոկինսկու մահուան առիթով:

դ, Մասնակցել է Հայ Գրերի գիւտի և Տպագրութեան յօրելեանական թիֆլիսի հանդէսներին՝ ուղարկելով ներկայացուցիչ:

ե, Մասնակցել է հանգուցեալ Ս. Զաւարեանի, Ա. Քալանթարի և Կ. Խատիսեանի թաղմանը՝ պատգամաւորութիւններով:

զ, Աչքի առաջ ունենալով, որ Թիֆլիսում սկսել է իր գործունէութիւնը մի նոր ընկերութիւն «Հայոց Պատմական և Հնագիտական Ընկերութիւն», որի նպատակն է ուսումնասիրել Հայոց պատմութիւնը և պահպանել Հայկական ամեն տեսակ հուշարձաններ, մի գրութեամբ ողջունել է այդ Ընկերութեան բացումը և մինչև սեպտեմբեր ամսին գրասենեակ ունենալը՝ Ընկերութեանս գրասենեակը դրել է նրա խորհրդի տրամագրութեան տակ:

Նուէրներ

Վարչութիւնս իր պարտքն է համարում շնորհակալութիւն յայտնել հետեւալ հաստատութիւններին և անձերին իրանց համակրական ցոյցերի համար.

ա, Դրամական նուէրներ

1912 ՍԵՊՏԵՄԲԵՐ—31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1913

	Ստացւած նուէրներ		Արտաբերական			Փրկական ֆոնդ		Ընկերութեան ֆոնդ	
	Բ.	Գ.	Բ.	Գ.		Բ.	Գ.	Բ.	Գ.
օր. Մանէ Հախլերդեանից	30	—			պ. Սամսոն Յարութիւնեանից			100	—
օր. Աննա Հախլերդեանից	20	—			Անյայտ ունից			500	—
Թեւալի մի խումբ աշուղներից	4	—			Կար. Մարտիրոսեանից	5	—		
Կապելմէյստեր Տեպլիցկուց	1	—			Տիկին Զ. Զ.-ից	5	—		
պ. Համբարձում Մելիքեանից	200	—			Տիկին հասարակութիւնից	75	—		
պ. Կուզանեանից	—	50			Տ. Յովհաննիսեանից	10	—		
«Մշակ»-ի խմբագրութեան միջոցով զանազան անձնաւորութիւններից	42	50			Գարեգին Ենգիբարեանից 1913 թ.	25	—		
Դաւալուի ս. Յակովբ. ղալոցից			5	50	Յով. Տէր-Յարութիւնեանից	10	—		
Մի խումբ զոկ կահանցից			25	—	Համբարձում Մելիքեանից՝ Թիֆլ. Ազն. հող. բանկ. գրաւթ. «Հորիզոն» թերթի միջոցով՝ զանազան անձնաւորութիւններից	800	—		
պ. Զաւալ Տէր-Գրիգորեանից			10	—	Գարեգին Ենգիբարեանից 1914 թ.	25	—		
պ. Կուզանեանից			—	50	Ներսէս Սաղանդարովից	3	—		
պ. Նիկ. Աղբալեանից			5	—					
	298	—	46	—		1258	—	600	—

բ, Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան՝ խորհրդին, որ շնորհաւորելով Ընկերութեանս բացումը՝ իր դահլիճը հինգշաբթի օրերը մինչև հետեւեալ ամառը դրեց Վարչութեանս տրամադրութեան տակ մեր դասախօսութիւնների համար առանց վարձի:

գ, Բժ. Ա. Բուզուղեանցին, որ յայտնեց Վարչութեան, թէ երբ Ընկերութիւնս հրատարակէ մի շաբաթաթերթ՝ այդ նպատակի համար կնուիրէ 300 ուրբի:

դ, Պօլսահայ գրագէտ պ. Միրիճանեանին, որ նուիրեց Ընկերութեանս իր աշխատասիրած «Լքեալ ընտանիք» գրքից երեք հարիւր օրինակ:

ե, Ներսէս քահանայ Հերթեցեանին Ռոստով, որ նուիրեց Ընկերութեանս իր թարգմանած «Отвѣтъ архимандрита Мурадяна на послание Римскаго папы Льва XIII գրքոյկից 200 օրինակ:

զ, Պ. Մ. Բունեաթեանին Մոսկւա, որ նուիրեց Ընկերութեանս հանգուցեալ Ա. Արասխանեանցի ձեռագիր աշխատութիւնները, նրա աշխատակիցների զանազան յօդուածներն ու «Մուրճի» համարներ:

է, Սայեաթ-Նօվայի թոռան որդի պ. Բագրատ Տէր-Մովսիսեան Սայեաթեանին, որ նուիրեց Ընկերութեանս Սայեաթ-Նօվայի երգերի ժողովածուի ձեռագիր «Դաւթարը»:

ը, Պ. Տ. Յովհաննիսեանին, որը ներկայացնելով Վարչութեանս 100 օրինակ իր թարգմանած «Յարութիւն» գրքից՝ խնդրեց վաճառումից գոյացած գրամը յատկացնել գրական ֆօնդին:

թ, Բաֆֆիի որդի պ. Արամ Մելիք-Յակոբեանին, որ նուիրեց Ընկերութեանս Բաֆֆիի գրքերի մի հին պահարան:

և ժ, Ընկերութեանս այն անդամներին, որոնք արձագանք տալով Վարչութեանս կոչին՝ իրանց աշխատութիւնները նուիրեցին Վարչութեանս հիմնելիք՝ Ընկերութեանս անդամների բոլոր աշխատութիւնների գրադարանին:

ՀԱՇՈՒԷԿԵԻՌ

1912 սեպտեմբեր 23—1913 դեկտեմբեր 31

ՄՈՒՏՔ

1912 սեպտեմբեր 23

ՀԱՇՈՒՒՆ

	Ր.	Կ.
1. Գրական ֆոնդ		
Գրական ֆոնդի համար ստացուած է	1258	—
2. Արասխանեանի ֆոնդ		
Արասխանեանի ֆոնդի համար ստացուած է	46	—
3. Սայեաթ-Նովայ		
Սայեաթ-Նովայի մահարձանի համար ստացուած է	1615	22
4. Անդամավճարներ		
Անդամավճարներ ստացուած է 108 անձից	538	—
5. Մուսքի կամ սեգոնի տոմսերից ստացուած է	35	—
6. Երեկոյրներից ստացուած է	423	12
7. Նուէրներից	600	—
8. «Հին Աստուածներ»-ի դատից	354	85
9. Նուիրուած գրքերի վաճառումից	4	65
	4874	84

1) Այս գումարի մէջ մտնում է Սայեաթ-Նովայի երգերի I տպագրութեան վաճառումից գոյացած գումարը.

Ծանօթ. Առ 1 յունուարի 1914 թ. մնում է՝

1, Գրական ֆոնդի գումար	1198	—
2, Արասխանեանի ֆոնդի գումար	46	—
3, Սայեաթ-Նովայի գումար	245	29
	1489	29
Դրամաբեկում կար	1379	69
Գրական ֆոնդից ծախսուած	109	60

Գանձապահ՝

ԿԵՒՈՒ

1913 դեկտեմբեր 31

ԵԼՔ

	Ր.	Կ.
1. Գրական ֆոնդի հաշուից նպաստներ են տրուած	60	—
2. Սայեաթ-Նովայի հաշուից ծախսուած է՝ նրա մահարձանի կառուցման և գրքերի տպագրութեան համար	1369	93
3. Դասախօսութիւնների համար վճարուած	200	—
4. Աշուղական, դպրոցական երգեցիկ խմբերին և դերասան Վրոյրին վճարուած է	33	20
5. Դահլիճի և թատրոնի վարձ	288	43
6. Մարկաների	32	84
7. Հոգեհանգիստներ, պսակներ և ցաւակցական հեռագիրներ	115	82
8. Յօրելեանական ծախսեր	78	60
9. Տպարանական ծախսեր, պատկերներ, գրքեր, թուղթ և այլն	180	26
10. Յայտարարութիւնների և ափիշանների	190	94
11. Գործավարի ուժիկ	270	—
12. Ծառաներին	140	90
13. Դրասենեակի վարձ	180	—
14. Մէքէրտին Սայեաթ-Նովայի գրքերը կազմելու	49	45
15. Ամբիօնի համար Մամաջանեանցին	30	50
16. Հաշիւները կարգաւորելու համար	25	—
17. Կահ-կարասիք և ուրիշ գրասենեկային իրեր	193	40
18. Դրասենեկային մանր ծախսեր	55	88
	3495	15
Մնացորդ առ 31 դեկտ. 1913	1379	69
	4874	84

Անուշաւան Աբովեան



1913 ԹՈՒԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

1. Աբղեղեան Արտաշէս (վճարած).
2. Աբէլեան Ներսէս (վճ.)
3. Աբովեան Անուշաւան (վճ.)
4. Աթանասեան Աշոտ (վճ.)
5. Աղանեան Գիւտ ա. ք. (վճ.)
6. Աղասարեան Բախշի (վճ.)
7. Աղբալեան Նիկողայոս (վճ.)
8. Աղաբաբեան Յակոբ (վճ.)
9. Ալիխանեան Յակոբ (վճ.)
10. Արմենեան Արմեն (վճ.)
11. Ակունեան Յովհաննէս
12. Բաբախանեան Առաքել (Լէօ) (վճ.)
13. Բաբայեան Խաչատուր (վճ.)
14. Բաշինջաղեան Գէորգ (վճ.)
15. Բահաթրեան Կատարինէ
16. Բաբուրեան Գէորգ
17. Բերբերեան Մինաս (վճ.)
18. Գաբրիէլեան Գարեգին (վճ.)
19. Գեօնջեան Յակոբ
20. Գալֆայեան Կարապետ (վճ.)
21. Դանիէլեան Սօֆիա տիկ. (վճ.)
22. Դանիէլեան Լևոն (վճ.)
23. Դեմիրճեան Դերենիկ (վճ.)
24. Երզնկեան Արամայիս
25. Եսայեան Սարգիս
26. Երզնկեան Սարգիս սարկ.
27. Զարգարեան Արիստակէս բժ. (վճ.)
28. Թումանեան Յովհաննէս (վճ.)
29. Թումանեան Մարիամ իշխանուհի (վճ.)
30. Թումանեան Յարութիւն
31. Իփէկեան Գասպար (վճ.)
32. Լիսիցեան Ստեփան (վճ.)
33. Լալայեան Երուանդ
34. Խնկոյեան Աթաբէկ (վճ.)
35. Խանազատեան Ռուբէն (վճ.)
36. Պետրոսեան Մադաթ (վճ.)
37. Ղլտճեան Արսէն վ. (վճ.)
38. Ղազարեան Արշակ (վճ.)
39. Ղազարեան Գէորգ (վճ.)
40. Ղազարեան Անուշաւան (վճ.)
41. Ծովղուրեան Յարութիւն քահանայ (վճ.)
42. Մինասեան Երուանդ բժ. (վճ.)
43. Մովսիսեան Աղէքսանդր (Շիր-վանդադէ)
44. Մուրայաջեան Սարգիս (Ատրպետ)
45. Մելիք—Աղամեան Լևոն (վճ.)
46. Մանուէլեան Լևոն (վճ.)
47. Մանուէլեան Միքայէլ (վճ.)
48. Մալխասեան Յովհաննէս (վճ.)
49. Մանգինեան Սեդրակ (վճ.)
50. Մատէնճեան Մամբրէ (վճ.)
51. Մելիք-Ղարազեօղեան Գէորգ (վճ.)
52. Յարութիւնեան Արշակ (վճ.)
53. Յարութիւնեան Իսահակ (վճ.)
54. Մելիք - Շահնազարեան Կոստան. ղին
55. Յովհաննիսեան Միքայէլ (Նար-ղոս)
56. † Յովհաննիսեան Արիստղոմ (վճ.)

57. Յովհաննիսեան Կարապետ (վճ.)
58. Յակոբեան Յակոբ
59. Յարութիւնեան Արշակ դերասան (վճ.)
60. Շահպարտեան Բազրատ (վճ.)
61. Շիրինեան Կարապետ (վճ.)
62. Զմշկեան Մակար (վճ.)
63. Սահակեան Սարգիս (վճ.)
64. Սահակեան Փառանձեմ (Լէյլի) (վճ.)
65. Սողոմեան Յովակիմ (վճ.)
66. Սերբերակեան Մարիամ (վճ.)
67. Վարդանեան Գրիգոր (վճ.)
68. Վանեցեան Մկրտիչ-Վալադեան (վճ.)
69. Վարդազարեան Փիլիպպոս (վճ.)
70. Վարդանեան Արշակ
71. Վրոյր (վճ.)
72. Տէր-Միրաքեան Յովհաննէս (վճ.)
73. Տեօքմէճեան Թագաւոր (վճ.)
74. Տէր Յարութիւնեան Միքայէլ (վճ.)
75. Տիգրանեան Արմենուհի օր. (վճ.)
76. Տրտոսեան (Գրիգորեան) Արշա-լոյս
77. Տէր Յարութիւնեան Յակոբ (վճ.)
78. Տէր Աւետիքեան Ստեփան (վճ.)
79. Տէր Ղազարեան Տիգրան (Տէրու-նի)
80. Փերումեան Տիգրան (վճ.)
81. † Քիշմիշեան Աղէքսանդր
92. Մհրաբեան Արշակ (վճ.)
93. Մուրադեան Գէորգ
94. Մայիլեան Անտօն (վճ.)
95. Յովհաննիսեան Յովհաննէս (վճ.)
96. Յովհաննիսեան Տիգրան (վճ.)
97. Նահապետեան Վաղարշակ (վճ.)
98. Զանեան Ա. (վճ.)
99. Տէր-Գրիգորեան Տիգրան
100. Տէր-Դանիէլեան Դաւիթ (վճ.)
101. Տէր-Սարգսեան Միրզա (վճ.)
102. Տէր-Ղազարեան Ղազար
103. Տէր-Բաղդասարեան Արէլ (վճ.)
104. Տէր-Պողոսեան Հայրիկ
105. Տէր-Առաքելեան Համազասպ (վճ.)
106. Օհանջանեան Ռուբէն
107. Ֆրանգեան Երուանդ
108. Մելեան Մեսրոպ ա. ք. (վճ.)
109. Մարութեան Օհանջան (վճ.)
110. Տէր - Բաղդասարեան Գարեգին (վճ.)

Բ Ա Թ Ո Ի Մ

Ե Ր Ե Ի Ա Ն

Բ Ա Գ Ո Ի

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Վ Ա Ղ Ա Ր Շ Ա Պ Ա Տ

Ա Ղ Է Ք Ս Ա Ն Դ Ր Ա Պ Ե Լ

82. Աթաբէկեան Լևոն բժ.
83. Բաղադ-Աղաջանեան Գրիգոր
84. Գեղամեան Եղիշէ ա. ք.
85. Գրիգորեան Սիրաք (վճ.)
86. Ենգիբաբեան Գարեգին (վճ.)
87. Լազարեան Յովհաննէս (վճ.)
88. Խաչատրեան Հայկ
89. Խանազատեան Յովակ
90. Կոստանեան Յովհաննէս (վճ.)
91. Կրասիլնիկեան Արսէն
115. Թորոսեան Սահակ (վճ.)
116. Թագէտեան Թագէտ (վճ.)
117. Թորամանեան Թորոս (վճ.)
118. Միրզայեան Յովսէփ (վճ.)

119. Նալբանդեան Գեղամ-Արմէն (վճ.)
 Ա. Խ Ա. Լ. Ք Ա. Լ. Ա. Ք
 120. Տէր-Գրիգորեան Զաւալ (վճ.)
 121. Տէր-Գրիգորեան Արամ (վճ.)
 Ե Ա. Լ. Տ Ա.
 122. Բաբիեան Սիմէօն (վճ.)
 Դ Ո Ի Շ Է թ
 123. Ապրիլեան Յուսիկ քահ. (վճ.)
 Շ Ո Ի Շ Ի
 124. Խանլարեան Յակոբ (վճ.)
 125. Տէր-Պողոսեան Գրիգոր (վճ.)
 Ա. Ր Դ Ա. Հ Ա. Ն
 126. Նազանեան Սուրէն (վճ.)
 Ն Ա. Խ Ի Զ Ե Ի Ա. Ն
 127. Պարզեան (Տէր-Սարգսեան) Ար-
 տակ (վճ.)
 128. Շահազիզ Երուանդ (վճ.)
 129. Վարդանեան Փիլիպպոս (վճ.)
 130. Տէր-Յովնանեան Արշալոյս
 131. Զալխուշեան Գրիգոր (վճ.)
 Ռ Ո Ս Տ Ո Վ. Դ/վ.
 132. Խշտոյեան Ենովք (վճ.)
 133. Հերթեցեան Ներսէս քահ.
 Ք Ո Ի Թ Ա. Յ Ի Ս
 134. Հայրապետեան Հայրապետ (վճ.)
 Վ Լ Ա. Դ Ի Կ Ա. Ի Կ Ա. Զ
 135. Սառիկեան Յակոբ քահ. (վճ.)

- Ա Ս Տ Ր Ա. Խ Ա. Ն
 136. Մկրտումեան Գէորգ քահ. (վճ.)
 Կ Ո Լ Ա. Յ (ՇԴ.)
 137. Համալեան Սիմէօն
 Շ Ո Ի Լ Ա. Ի Է Ր
 138. Միրաքեան Վահան (վճ.)
 Գ Ի Ի Լ Ա. Գ Ա. Ր Ա. Կ Գ.
 139. Շաթիրեան Աւետիք (վճ.)
 Բ Ա. Լ Ա. Խ Ա. Ն Ա.
 140. Տէր-Դանիէլեան Միսաք (վճ.)
 141. Օհանեան Քրիստափոր քթ. (վճ.)
 Ա. Պ Ե Տ Ե Ր Բ Ո Ի Ր Գ
 142. Ադոնց Նիկողայոս
 143. Բուդուղեան Արտաշէս քթ. (վճ.)
 Մ Ո Ս Կ Վ Ա.
 144. Բարխուդարեան Մկրտիչ (վճ.)
 145. Ծատուրեան Աղէքսանդր (վճ.)
 146. Միքայէլեան Աղէքսանդր-Մարտօ
 147. Այվազեան Յակոբ
 Բ Ո Ի Խ Ա. Ր Ե Ս Տ
 148. Փափազեան Վրթանէս
 Զ Ա. Ք Ա. Թ Ա. Լ Ա.
 149. Բէկ-Յովսէփեան Աստուածատուր
 (վճ.)
 Ս Ա. Լ Մ Ա. Ս Տ
 150. Գուրոյեան Աւետիք (Սէյրի) (վճ.)

1914 ԹՈՒԻ

Ն Ա Խ Ա Հ Ա Զ Ի Ի Ը

1914 թվի


ՄՈՒՏՔ

	Բ.	Կ.
1. Անդամավճարներ	500	—
2. Սեզոնի տույժ	25	—
3. Նուէրներ	400	—
4. Գրքերի վաճառումից	75	—
5. Երեկոյթից	500	—
6. Գրական երեկոյթներից	1000	—
7. Գրական ֆոնդի %/0	150	—
8. Նուէր «Դիւան հայոց գրականութեան» ժողովա- ծուի տպագրութեան համար	2000	—
	<u>Ընդամենը</u>	<u>4650</u> —

ՆԱԽԱՀԱՇԻԻԸ

ԾԱԽՔ

	Բ.	Կ.
1. Գրասենեակ	240	—
2. Գործավարին	360	—
3. Ծառային	120	—
4. Տպագրական և գրասենեկային ծախքեր, փոստ, հեռագիր	175	—
5. Գրական երեկոյթներին ա. Դահլիճի վարձ	500	—
բ. Դասախօսութիւնների վարձ	500	—
գ. Յայտարարութիւնների վարձ	100	—
6. Շիջուցումն պարտքի 1913 թ.	109	60
7. Նիւթերի տպագրութեան	2000	—
8. Տեղեկագրի տպագրութեան	60	—
9. Գրական ֆոնդին 25%	225	—
10. Արասխանեանի ֆոնդին	200	—
	<u>4589</u>	<u>60</u>
Առ 1 յունվ. 1915 թ. մնացորդ	60	40
	<u>4650</u>	<u>—</u>



ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I

Արձանագրութիւն Հայ Գրողների Կովկասեան Ընկերութեան հիմնադիր-ների ժողովի, որ կայացաւ 1912 հոկտեմբերի 3-ին ներկայութեամբ՝ Առաքել Բաբախանեանի (Լէօ), բժ. Արիստ. Զարգարեանի, Տիգրան Յովհաննիսեանի, բժ. Եր. Մինասեանի, Աշոտ Աթանասեանի, Եր. Լալայեանի և Գիւտ աք. Աղանեանի: Բացակայ էր՝ Ալէքս. Մովսիսեան (Շիրվանզադէ):

Ժողովի նախագահ ընտրուեց բժ. Ա. Զարգարեանը և քարտուղար՝ Գիւտ աք. Աղանեանը:

Նախագահը յայտնեց ժողովին, որ մամուլի մէջ մեր տուած յայտարարութեան արձագանք են տուել մեր գրագէտներից ոմանք, որոնք և ցանկութիւն են յայտնել անդամ լինել Ընկերութեանս. ուստի և առաջարկեց համաձայն կանոնադրութեան անդամներ ընդունել գաղտնի քուէարկութեամբ:

Բժ. Մինասեանն առարկում է, թէ՛ որովհետեւ հիմնադիր անդամներն ունեցել են ընկերներ, որոնք այս և այն պատճառով չեն ստորագրել նահանգապետին առաջարկած կանոնադրութիւնը, ուստի պէտք է միաձայն անդամ ընտրել բոլոր և նրանց, որոնք ըստ մեր կանոնադրութեան իրաւունք ունին ընտրուելու:

Ժողովը ընդունեց այս առաջարկը և քուէարկելով անդամ ընտրեց նրանցից հետեւեալ անձերին.— Գրիգոր Վարդանեանին, Արտաշէս Արեղեանին, Արշակ Յարութիւնեանին և Իսահակ Յարութիւնեանին՝ միաձայն, Նարդոսին 6 ձայնով ընդգէմ 1-ի:

Նոր առաջարկուածներից անդամ ընտրուեցան՝ Յովհ. Թումանեան, Սահակ Թորոսեան, Ստեփան Լիսիցեան, բժ. Աղասարեան, Տիգրան Գիւզալեան, Ռուբէն Խանազատեան, Մկրտիչ Վանեցեան—Վալադեան միաձայն. Փիլ. Վարդապետեան, Յակովբ Գեօնջեան և Սարգիս Մուքայաջեան—Ատրըպետ՝ 6 ձայնով ընդգէմ 1-ի. Լևոն Դանիէլեան, Լևոն Մելիք-Աղամեան և Բազրատ Շահպարտեան 5 ձայնով ընդգէմ 2-ի. Կարապետ Յովհաննեան—Կրպէ 4 ձայնով ընդգէմ 3-ի:

Նախագահը Գեղամ-Արմենը, որ նամակով խնդրել է Ալէքսանդրովից իրան անդամ ընդունել, հիմնադիր անդամներին անձանօթ լինելով՝ խնդրը մնաց ընդհ. ժողովին: Աս. Երեցեանի մասին որոշուեց, որ նա ինքը չիմէ ժողովին, որպէսզի ժողովը իրաւունք ունենայ նրան քուէարկել. նոյնը և Արիստով Յովհաննիսեանցի մասին:

Ընկերութեանս գործունէութեան շրջանը ընդլայնելու համար հարկաւոր համարուեց անդամների թիւը շատացնել, ուստի և պարաւորութիւն չընդունեց անդամների վրայ, որ իւրաքանչիւրը նրանցից մասնաւոր եղանակով առաջարկեն և միւս գրագէտներին, առանց խտրութեան ուղղութեան և հայեացքների, որ նրանք էլ շտապեն անդամագրուել Ընկերութեանս:

Որոշուեց այս հոկտեմբերի 10-ին երեկոյեան 7½ ժամին ընդհանուր ժողով գումարել Քաղաքային Դումայի դահլիճում՝ նոր անդամներ ընդունելու և պաշտօնատար անձինք ընտրելու համար:

Նախագահ՝ բժ. Արիստակես Զարգարեան

Անդամ-քարտուղար՝ Գիւտ ա. ք. Աղանեան

○○○○○

II

Հայ Գրողների Կովկասեան Ընկերութեան առաջին ընդհանուր ժողովը

Հոկտեմբերի 10-ին 1912 թ., Թիֆլիզում, քաղաքային Դումայի դահլիճում կայացաւ «Հայ Գրողների Կովկասեան ընկերութեան» առաջին ընդհանուր ժողովը, նախաձեռնութեամբ Ընկերութեան 8 հիմնադիր անդամների: Հիմնադիր անդամների քուէարկութեամբ *) ներկայ ժողովից առաջ ընկերութեան անդամ էին ընտրուել հետեւեալ անձինք.— Յովհաննէս Թումանեան, Նար. Դոս, Ատրպետ, Փիլիպպոս Վարդապետեան, Տիգրան Գիւզալեան, Վ. Վալադեան, Յակոբ Գեօնջեան, Արշակ Յարութիւնեան, Լևոն Մելիք-Աղամեան, Գրիգոր Վարդանեան, Ստեփան Լիսիցեան, Բազրատ Շահ-Պարտեան, Կարապետ Յովհաննեան, Իս. Յարութիւնեան և Ռուբէն Խանազատեան: Հիմնադիր անդամների հետ միասին (Լէօ, Շիրվանզադէ, բժ. Ա. Զարգարեան, Երեանդ Լալայեան, բժ. Ե. Մինասեան, Աշոտ Աթանասեան, Տիգրան Յովհաննիսեան. Գիւտ ք. Աղանեան)՝ ընդամենը 20 հոգի:

*) Քուէարկուել էին նրանք, որոնք ցանկութիւն էին յայտնել անդամագրուել Ընկերութեանը:

Ժողովը բացեց բժ. Ա. Զարգարեանը (հիմնադիր անդամների ժողովի նախագահը), համառոտակի բացատրելով Ընկերութեան կազմութեան պարագաները: Ժողովի նախագահ ընտրուում է, գաղտնի քւէարկութեամբ, Յովհաննէս Թումանեանը, ստանալով 14 սպիտակ և 3 սև քուէ:

Նախագահը, շնորհակալութիւն յայտնելով իր ընտրութեան համար, շնորհաւորում է ժողովականներին՝ Հայ Գրողների Ընկերութեան կազմութեան առթիւ, որի պահանջը զգալի է եղել վաղուց:

Ա. Արաքունեանը առաջարկում է յոտնկայս յարգել յիշատակը այն մարդկանց, որոնք իրենց հասարակական գործունէութեան ընթացքում միշտ աշխատել են Հայ Գրողների Ընկերութեան գաղափարը իրականացնելու համար: Դրանք են՝ Սմբատ Շահ-Ազիզ, Պերճ Պոօշեան և Ղազարոս Աղայեան: Ժողովականները ոտքի են կանգնում:

Կարգացւում են անունները այն անձանց, որոնք ցանկութիւն են յայտնել, անձամբ կամ նամակով թէ ուրիշի միջոցով, անդամագրուելու նորակազմ Ընկերութեանը:

Յ. Գեղջեանը կարեոր է համարում, որ անդամագրուել ցանկացողներից իւրաքանչիւրի մասին տեղեկութիւն տրուի: Ժողովի մեծամասնութիւնը, սակայն, գտնում է, որ անդամութեան թեկնածուները բաւականաչափ յայտնի են ժողովականներին: Անդամագրուել ցանկացողների անունները (18 հատ) զբւում են քւէարկութեան (գաղտնի), որին մասնակցում են քսան (20) հոգի: Քուէարկութիւնը հետեւեալ արդիւնքն ունեցաւ.

1) Վրթ. Փափազեան	17	սպիտակ և 3 սև
2) Լևոն Մանէլեան	20	» — »
3) Արիսողոմ Յովհաննիսեան	20	» — »
4) Արշակ Ղազարեան	17	» 3 »
5) Յովհաննէս Մալխասեան	16	» 4 »
6) Յակոբ Ալիխանեան	14	» 6 »
7) Գէորգ Ղազարեան	18	» 2 »
8) Յովհ. Տէր-Միրաքեան	17	» 3 »
9) Աթ. Խնկոյեան	18	» 2 »
10) Մակ. Չմշկեան	13	» 7 »
11) Յակոբ Յակոբեան	16	» 4 »
12) Դերենիկ Դեմիրճեան	18	» 2 »
13) Իշխ. Մ. Թումանեան	13	» 7 »
14) Սէյրի	17	» 3 »
15) Վրոյր	19	» 1 »
16) Գեղամ-Արմէն	15	» 5 »
17) Արամայիս Երզնկեան	14	» 6 »
*) 18) Միքայէլ Մանէլեան	17	» 3 »

Բոլորն էլ համարուեցին ընտրուած:

*) Այս 18 հոգու ընտրութիւնից յետոյ, ցանկութիւն է յայտնում քուէարկուել Յակ. Աղաբաբը, որը ուշ էր եկել: Նա քուէարկուեց առանձին և ստա-

Մ. Չմշկեանը հետեւեալ չորս առաջարկներն է անում. ա) Քանի որ Ընկերութեան հրապարակ գալը զուգորդում է հայ տառի 1500-ամեակին և հայ տպագրութեան 400-ամեակին, ոտքի կանգնելով յարգանք մատուցել՝ 400 տարի հայ գրականութեան անդամատանում գործած բոլոր անձանց յիշատակին. բ) Ժողովի կողմից շնորհաւորական հեռագիր ուղարկել Էջմիածին՝ տառերի գիւտի և տպագրութեան յորեւիանների առթիւ. գ) Թարգմանչաց օրը դարձնել Ընկերութեան տօնը և դ) հրատարակել ժողովածու բոլոր գրողների մասնակցութեամբ և նրա վաճառումից գոյանալիք արդիւնքը յատկացնել աղքատ գրողներին:

Տ. Յովհաննիսեանը այդ առաջարկները, բացի առաջինից, գտնում է օրակարգից միանգամայն դուրս, ուստի ժողովը չի կարող նշանցով զբաղուել:

Ժողովը մերժում է զբաղուել Մ. Չմշկեանի վերջին երեք առաջարկներով. ընդունում է միայն առաջինը և յոտնկայս յարգում է բոլոր նախորդ գրական գործիչների յիշատակը:

Ժողովը անցնում է վարչութեան 8 անդամների և 3 փոխանդամների ընտրութեան:

Ա. Արաքունեանը առաջարկում է թեկնածուների ընտրութիւնը կատարել թերթիկներով, քանի որ Ընկերութիւնը խոշոր նշանակութիւն ունի և վարչութեան ընտրութիւնների հարցին հարկաւոր է մօտենալ լրջօրէն: Առաջարկն ընդունում է: Թեկնածութեան համար առաջարկում են՝

Յովհ. Թումանեան (26 ձայն), Լէօ (24), Տ. Յովհաննիսեան (17), բժ. Ա. Զարգարեան (18), Արշ. Յարութիւնեան (14), Ա. Աթանասեան (16), Նար-Դոս (14), բժ. Ե. Մինասեան (12), Ե. Լալայեան (11), Գ. ք. Աղանեան (14), Շիրվանզադէ (բացակայ, 9), Ստ. Լիսիցեան (9), Ատրպետ (8), Ա. Ղազարեան (7), Յ. Յակոբեան (7), Յ. Ալիխանեան (7). Գնացած բոլորը (19 հոգի) ստացան իւրաքանչիւրը՝ եօթ ձայնից պակաս: Մի քանիսը հրաժարւում են իրենց քուէատուփերը դնելուց: Յ. Գէնջեան, որը ստացել էր մի ձայն, դնում է նաև իր քուէատուփը: Քուէարկում են՝ Յովհ. Թումանեան, Լէօ, Ե. Լալայեան, Տ. Յովհաննիսեան, Գ. ք. Աղանեան, բժ. Ա. Զարգարեան, Ա. Աթանասեան, Արշ. Յարութիւնեան, Յ. Ալիխանեան և Յ. Գէնջեան: Քուէարկութիւնը (գաղտնի) տուեց հետեւեալ արդիւնքը.

1. Յով. Թումանեան	33	սպիտակ և ոչ մի սև
2. Լէօ	30	» 3 »
3. Բժ. Ա. Զարգարեան	28	» 5 »
4. Տ. Յովհաննիսեան	27	» 6 »
5. Ա. Աթանասեան	27	» 6 »
6. Գ. ք. Աղանեան	25	» 8 »
7. Արշ. Յարութիւնեան	23	» 10 »

ցաւ 20 սպ. և 8 սև (այս անգամ քուէարկութեանը մասնակցում էին նաև նոր ընտրուած անդամները):

8. Եր. Լալայեան	22	»	11	»
9. Յակ. Ալիխանեան	17	»	14	»
10. Յակ. Գէնջեան	3	»	30	»

Վարչութեան անդամութեան համար ընտրուեցին այդպիսով՝ Յովհ. Թումանեան, Լէօ, բժ. Ա. Զարգարեան, Տ. Յովհաննիսեան, Ա. Աթանասեան, Գ. ք. Աղանեան, Արշ. Յարութիւնեան և Ե. Լալայեան: Յակ. Ալիխանեանը համարուեց անձնափոխանորդ:

Բժ. Ա. Զարգարեան միաձայն ընտրուեց Վարչութեան գանձապահ: Ընտրութիւններին մասնակցեցին 33 հոգի:

Ժամանակի ուշ լինելու պատճառով որոշուեց Վարչութեան յաջորդ ժողովը փակել, յանձնարարելով նորընտիր Վարչութեան յաջորդ ժողովը գումարել մի ամսից ուշ ուշ:

Ժողովի փակումից առաջ, բոլոր ներկայ եղողները ոտքի կանգնելով յարգում են Ղազարոս Աղայեանի յիշատակը, որի անունով, նրա հայրենի Բոնիս-Պազէն գիւղում, առաջիկայ կիւրակի օրը բացուելու է զրադարան-ընթերցարան: Բժ. Զարգարեանը, Հրատ. Ընկ. Վարչութեան նախագահը, յայտնում է, որ Հրատ. Ընկերութեան գրասենեակը գրեւոր է նորակազմ Ընկ. Վարչութեան տրամադրութեան տակ, մինչև որ Ընկերութիւնը իր առանձին գրասենեակը կ'ունենայ:

Նախագահ՝ Յովհ. Թումանեան

Քարտուղար՝ Վ. Վալադեան



III

Կովկասեան Հայ Գրողների Ընկերութեան ք. Ընդհանուր ժողովը

1912 թ. նոյեմբերի 25-ին

Կիւրակի, նոյեմբերի 25-ին, երեկոյեան 7 ժամին քաղաքային տան դահլիճում կայացաւ «Կովկասի Հայ Գրողների Ընկերութեան» երկրորդ Ընդհանուր ժողովը:

Վարչութեան նախագահ Յովհաննէս Թումանեանը 24 անդամի և 14 անդամագրուել ցանկացողի ներկայութեամբ բանալով ժողովը, հրաւիրում է ընտրել նախագահ: Պ. Յ. Գէնջեանի պահանջով ընտրութիւնը կատարուեց և թերթիկներով:

Առաջարկուեցին թեկնածուներ պ. պ. Իս. Յարութիւնեան և Արշակ Ղազարեան:

14 ձայնով 6-ի դէմ նախագահ է ընտրուում պ. Իս. Յարութիւնեանը և քարտուղար ընտրուում է Ա. Գուլօեանը:

Նախ քան օրակարգի հարցերին անցնելը, նախընթաց Ընդհանուր Ժո-

ղովի քարտուղար պ. Վալադեանը կարդում է նոյն ժողովի արձանագրութիւնը: Պ. Գ. Վարդանեանը նկատում է, որ բժ. Արիստակէս Զարգարեանը, բանալով անցեալ Ընդհանուր ժողովը, յայտնեց, որ Ընկերութիւնը գոյութիւն է ստացել տառերի գիւտի և հայ տպագրութեան յօբելանական մասնաժողովի ջանքերով: այդ բանն արձանագրութեան մէջ չէ յիշուած, հարկաւոր է մտցնել: Առաջարկուեց և ընդունուեց ժողովի կողմից, որ բժ. Զարգարեանը ներկայացնէ իր ասածները գրաւոր կերպով, որը և կցել ընդհանուր ժողովի արձանագրութեանը:

Դրանցից յետոյ ժողովի նախագահը կարդում է օրակարգի հարցերը:

ա) Վարչութեան ղեկուցումը գրական ֆօնդ կազմելու մասին:

բ) Ընտրութիւն նոր անդամների:

գ) Ընթացիկ հարցեր:

Որպէսզի նոր ընտրուող անդամներն էլ մասնակցութիւն ունենան ժողովի զբաղմունքներին, առաջինը դրուեց է նոր անդամների ընտրութիւնը: Վարչութեան նախագահ Յովհաննէս Թումանեանը խօսք առնելով ասում է. —նախքան նոր անդամագրուել ցանկացողների քուէարկութեան անցնելը, ես կարծում եմ կարևոր է բացատրել մեր կանոնադրութեան առաջին կէտը, թէ ո՞վ կարող է անգամ գրուել Հայոց Գրական Ընկերութեանը. մանաւանդ այդ հարցն այժմ մամուլի մէջ վէճի առարկայ է դարձել: Մեր կանոնադրութեան առաջին կէտի հիման վրայ Ընկերութեանը անդամ կարող են լինել նրանք, որոնք հայոց մէջ աշխատում են գրականութեան, գիտութեան և մամուլի ասպարէզներում: Այսպիսով պարզուեց, որ Ընկերութիւնը ընտրեալների մի կաճառ չէ, հայկականակադեմիա չէ, այլ մի հաստատութիւն, որի յարկի տակ կարող են ժողովուել խոշոր ու տաղանդաւոր մարդկանցից սկսած մինչև ամենահամեստ աշխատաւորն այդ ասպարէզներում՝ փոխադարձ օգնութեան և բարոյական-գեղարուեստական զարգացման նպատակով, ճիշտ այնպէս, ինչպէս է ուսաց գրական Ընկերութեան մէջ, ուր Տօլստօյի, Տուրգենևի, Զեխովի և միւս մեծերի հետ միասին գրած են շատ համեստ անուններ: Եթէ մենք խիստ ենք լինելու և խորական, ես կը ցանկայի, որ այդ լինէր Ընկ. բարոյականի վերաբերութեամբ և աշխատէինք նրա բարոյական պատկերը պահել մաքուր, անաղարտ, բարձր ամեն նեղ կուսակցական միտումներից: Եւ արդէն առանց այդ պայմանների չի կարող լինել գրական-գիտական միջնորդ, չի կարելի երևակայել գրական-գիտական մի հաստատութիւն:

Պ. Յ. Գէնջեանը բողոքում է այդ սկզբունքի դէմ, պահանջելով, որ Ընկերութեանը մասնակցելու թոյլ տան միայն պրօֆէսիօնալ գրողներին: Ռուս գրողների Ընկերութեան մէջ, ճիշտ է, կան մինչև իսկ բնագործներ, բայց դրանք բոլորը պրօֆէսիօնալ գրական աշխատաւորներ են:

Ժողովի նախագահը բացատրում է, որ կանոնադրութեան մէջ պարզ ասուած է հեղինակ, գիտնական, լրագրող, որոնք կարող են մտնել Ընկ. մէջ և հարցնում է ժողովի կարծիքը՝ կարևորութիւն կայ ներկայումս զբաղուել

այդ հարցով, թէ՞ ոչ. կարծիքները բաժանուում են և ՚ի վերջոյ խնդիրը դրուում է քննութեան:

Պ. Արշակ Յարութիւնեանը գտնում է, որ մենք ուսանելի և այլ ազգերի օրինակով չենք կարող գրողները զուտ պրօֆէսիօնալ ընկերութիւն կազմել, քանի որ մեզանում գրականութիւնը, որպէս պրօֆէսիա, դեռ ևս չի ապահովում իր մշակներին: Մնում է թողնել ընդունուած ձևը և նոր անդամներին քւէարկելիս լինել ճանաչող և բարեխիղճ:

Պ. Արշակ Ղազարեանը անհրաժեշտ է գտնում, որ անդամների ընտրութեան խնդրում գործադրուի որոշ կրիտէրիում: Հարցեր են տալիս, օրինակ՝ ի՞նչ կառաջարկէիք: Պ. Ա. Ղազարեանը պատասխանում է. օրինակ՝ մի տարի ժամանակամիջոց գրել սկսած օրից. ունենան, ի հարկէ, գեղարուեստական գրողների լեզու: Բայց դա կարեւոր չէ. երբ որ սկզբունքով կը գրուի իմ առաջարկը, այն ժամանակ կարելի է մի կրիտէրիում որոշել:

Պ. Յով. Թումանեանը առաջարկում է սրա դէմ, թէ ժամանակը չի կարող ծառայել որպէս կրիտէրիում. էս օր դուրս եկած մի գեղարուեստական գրող կարող է այնպիսի մի երկ ունենալ, տալ, որ միանգամայն կորոշի իր տեղը գրականութեան մէջ, կամ մի ուրիշը կը տայ գիտական ուսումնասիրութիւն, երրորդը դուրս կը գայ մամուլի մէջ այնպիսի թափով ու յօդուածներով, որ միանգամից կը համոզի, որ ինքը հրապարակախօսական մի խոշոր ընդունակութիւն է: Միթէ սրանց պէտք է ասենք. սպասեցէք մի տարի, որ քեզ ընդունենք մեր Ընկերութեան մէջ:

Պ. պ. Դեմիրճեան և Վալադեան գտնում են ընդունուած ձևը նպատակայարմար:

Նախագահը ձևակերպում է արտայայտուած կարծիքները:

Առաջարկում են բանաձևեր պ. պ. Բժ. Մինասեան, Արշ. Ղազարեան և Արշ. Յարութիւնեան: Պ. Արշ. Ղազարեանի կրիտէրիում որոշելու բանաձևն ստանում է 4 ձայն: Բժ. Մինասեանի և Յարութիւնեանի բանաձևերն էապէս նոյն էին, միայն իրար լրացնում էին: Չայների մեծամասնութեամբ անցաւ վերջինի բանաձևը, որ հետեւեալն է. «Ժողովը լսելով զանազան կարծիքներ կանոնադրութեան առաջին կէտի բուն իմաստի, գտնում է, որ այդ կէտը չպէտք է հասկանալ այն մտքով, թէ Ընկերութեան անդամագրողները պէտք է անպատճառ պրօֆէսիօնալ գրող (литераторъ), գիտնական, կամ լրագրող լինին: Գալով այն խնդրին, թէ ի՞նչ կրիտէրիում պէտք է ընդունել Ընկերութեան անդամագրուել ցանկացող որ և է մարդու՝ համաձայն կանոնադրութեան առաջին կէտի՝ «գրող» (литераторъ), «գիտնական» կամ «լրագրող» ճանաչելու համար, ժողովը գտնում է, որ այդ պէտք է թողնել իւրաքանչիւր ընտրողի խղճին ու անձնական հայեցողութեանը»:

Այնուհետև Վարչութեան նախագահը կարդում է անդամագրուել ցանկացողների անունները, 50-ից աւելի, որոնք գիմում էին արել Թիֆլիսից և Կովկասի ու Ռուսաստանի զանազան վայրերից: Դրանցից ոմանց վերաբերմամբ ժողովականների պահանջով տրուում են տեղեկութիւններ: Մի երկու հոգի, զանազան անորոշութիւնների պատճառով չեն ենթարկուում քուէարկու-

թեան: Տուիերի քուէթեան պատճառով քուէարկութիւնը կատարուում է երկու նուագով: Առաջին նուագի քուէարկութիւնից յետոյ խօսք է բացուում 22 սպիտակով ընտրուած օր. Լէյլիի մասին, որը կանանց բարձր կուրսերի ուսանողուհի է, և հարց է առաջարկում՝ թէ կարճ կ'են ուսանողներն առհասարակ լինել Ընկերութեան անդամ, քանի որ կանոնադրութեան մէջ ասուած է, որ անհափառաւ ուսանողներն անդամ լինել չեն կարող, մինչդեռ օրիորդը չափահաս է, սակայն ուսանողուհի է, Տրուում են թեր և դէմ կարծիքներ. ի վերջոյ ժողովը յանձնարարում է Վարչութեանը պատշաճ ազդեցիկներից հաւաստիանալ կանոնադրութեան այդ կէտի ճշգրիտ կիրառման մասին և զեկուցել նրան յաջորդ ժողովին: Այդ հիման վրայ և Վարչութիւնը չի քուէարկում օր. Արմէնուհի Տիգրանեանին, որը նոյնպէս կանանց բարձր կուրսերի ուսանողուհի է:

Առաջին նուագի քուէարկութեամբ, որին մասնակցում էին 24 հոգի, ընտրուում են՝

1. Ղահրամանեան Մարտիրոս	16 սպիտակ	6 սև	2 ձեռնպահ
2. Եսայեան Սարգիս	22 »	2 »	
3. Տէօքմէճեան Թագևոր	19 »	5 »	
4. Տէր-Գրիգորեան Տիգրան	13 »	10 »	1 ձեռնպահ
5. Մեհրաբեան Արշակ	16 »	8 »	
6. Ճուղուրեան Յարութիւն, քահ.	18 »	6 »	
7. Երզնկեան Սարգիս, սարկաւազ	16 »	8 »	
8. Մուրադեան Գէորգ	22 »	2 »	
9. Աւետիսեան Մարգար	22 »	2 »	
10. Գեղամեան Եղիշէ, աւ. քահ.	18 »	6 »	
11. Սահակեան Սարգիս	21 »	3 »	
12. Նահապետեան Վաղարշակ, Բժ.	16 »	8 »	
13. Մայիլեան Անտօն	17 »	7 »	
14. Օհանջանեան Ռուբէն	15 »	9 »	
15. Աղբալեան Նիկողայոս	24 »	միաձայն	
16. Արմէնեան Արմէն, դերասան	22 »	2 սև	
17. Աթաբէգեան Լևոն, Բժ.	23 »	1 »	
18. Իփէկեան Գասպար	17 »	7 »	
19. Տէր-Մանուէլեան Լևոն	13 »	11 »	
20. Մելեան Մեսրոպ, աւ. ք.	20 »	4 »	
21. Գրիգորեան Սիրաք	16 »	8 »	
22. Խզմալեան Թադէոս	23 »	1 »	
23. Տէր-Դանիէլեան Դաւիթ	16 »	8 »	
24. Օհանեան Քրիստափոր Բժ.	18 սպիտակ	6 սև	
25. Տէր-Սարգսեան Միրզա	15 »	9 »	
26. Տէր-Ղազարեան Ղազար	15 »	9 »	
27. Տէր-Բաղդասարեան Արէլ	12 »	10 »	

Երկրորդ նուագի քուէարկութեան մասնակցում են 21 հոգի և ընտրւում են հետեւեալ անձերը.

28. Բարիեան Սիմէօն	18 սպիտակ	3 սև
29. Տէր-Պօղոսեան Հայրիկ	11 »	8 » 2 ձեռնպահ
30. Տէր-Յարութիւնեան Միքայէլ սար.	13 »	8 »
31. Յովհաննիսեան Յովհաննէս	20 »	1 »
32. Կոստանեան Յովհաննէս	19 »	2 »
33. Կրասիլնիկեան Արսէն	17 »	4 »
34. Տէր-Մարտիրոսեան Յովհ. (Ա-դօ)	19 »	2 »
35. Սառիկեան Յակոբ քահանայ	15 »	6 »
36. Հերթեգեան Ներսէս քահանայ	12 »	9 »
37. Նազանեան Սուրէն	13 »	8 »
38. Աբովեան Անուշաւան	16 »	5 »
39. Սողովեան Յովակիմ	21 »	միաձայն
40. Սերբերեակեան Մարիամ	18 »	3 սև
41. Հայրապետեան Հայրապետ	15 »	6 »
42. Տէր-Առաքելեան Համազասպ Զոր-Քէշիշեան	18 սպ. 3 սև	
43. Մանգլինեան Սեդրակ	19 սպիտակ	2 սև
44. Ծատուրեան Ալէքսանդր	21 »	միաձայն
45. Բերբերեան Մինաս	20 »	1 սև

Չեն ընտրւում հետեւեալ անձինք ստանալով՝

1. Գալֆայեան Կարապետ դերասան	10 սպիտակ	10 սև	1 ձեռնպահ
2. Բազադ Աղաջանեան Գրիգոր	8 »	10 »	3 »
3. Պարդեան Ալէքսանդր	6 »	12 »	3 »
4. Մկրտումեան Յովհաննէս	9 »	10 »	2 »
5. Տէր-Միրաքեան Տ.	9 »	12 »	

Քուէարկութեան հետեւանքը պարզուելուց յետոյ բժ. Մինասեանը հարց առաջարկեց վարչութեանը, թէ նա արդեօք որևէ կերպ մասնակցել է դերասան Աւետեանի յօրեկանին:

Վարչութեան նախագահը պատասխանեց, որ Գրողների Ընկ. պէտք է ինքնուրոյնութեամբ արձագանք տայ հայ կեանքի աւելի խոշոր երևոյթներին և ապա՝ դեր. Աւետեանի յօրեկանին չէր կարող մասնակցել, քանի որ հրաւեր չի ստացել: Ժամանակի ուշ լինելու պատճառով օրակարգի միւս հարցերի քննութիւնը յետաձգուեց, նշանակելով ժողովի շարունակութիւնը առաջիկայ կիրակի, դեկտեմբերի 2-ին:

Ժողովը փակուեց ժամը 11-ին տեւելով 3^{1/2} ժամ:

Նախագահ՝ Իս. Յարութիւնեան

Նոյեմբերի 30-ին 1912 թ.
Թիֆլիս

IV.

Կովկասի Հայ Գրողների Ընկերութեան Բ. Ընդհանուր Ժողովը:

(Շարունակութիւն)

1912 թ. դեկտեմբերի 2-ին:

Դեկտեմբերի 2-ին ժամը 8-ին Դումայի դահլիճում բացուեց Հայ Գրողների Կովկասեան Ընկերութեան Բ. ընդհանուր ժողովի շարունակութիւնը՝ ներկայութեամբ 23 անդամի և 4 անդամագրուել ցանկացողների: Նախագահում էր դարձեալ պ. Իսահակ Յարութիւնեանը:

Կարդացուեց և փոքրիկ փոփոխութիւններով հաստատուեց անցեալ ժողովի արձանագրութիւնը:

Պ. Ալիխանեանը հարց է առաջարկում, թէ ի՞նչ է նշանակում, դերասան Աւետեանի յօրեկանին մասնակցելու առիթով վարչութեան պ. Նախագահի անցեալ ժողովում յայտարարուածը, թէ Ընկերութիւնը կարող է մասնակցել միաձայն հայ կեանքի խոշոր երևոյթներին: Պ. Թումանեանը պատասխանում է, որ ինքնաբերաբար պէտք է մասնակցէ, իսկ ֆինացեալ դէպքերում, երբ դիմում կստանայ, միշտ պատրաստ կլինի արձագանք տալու ամեն կուլտուրական երևոյթի: Ժողովը գոհանում է այդ բացատրութեամբ:

Պ. Սօլովեանը հարցնում է, թէ ի՞նչ եղաւ ուսանողների անդամագրութեան հարցը, որը ժողովի յանձնարարութեամբ վարչութիւնը պէտք է ստուգէր: Պ. Թումանեանը տալիս է տեղեկութիւն, թէ վարչութիւնը տեղեկացել է իրաւաբաններից, որ պետական օրէնքի մէջ ասուած է «անչափահաս աշակերտ» խօսքերը վերաբերում են միջնակարգ և տարրական դպրոցների աշակերտներին: Իսկ բարձրագոյն դպրոցների ուսանողները միշտ ազատ են մասնակցել հասարակական ընկերութիւններին, եթէ նրանց վարչութիւնը, կամ ներքին կանոնադրութիւնը թոյլ է տալիս: Ուրեմն օր. Լէյլին և Արմենուհի Տիգրանեանը պէտք է տեղեկանան թոյլ է տալիս արդեօք Թիֆլիսի կանանց բարձր կուրսերի վարչութիւնը, կամ այդ հաստատութիւնների ներքին կանոնադրութիւնը՝ մասնակցել հասարակական ընկերութիւններին:

Դրանից յետոյ պ. Նախագահը կարդում է օրակարգի հարցերը.

1. Վարչութեան զեկուցումը զրական ֆօնդ կազմելու մասին:

2. Ընկերութեան 1913 թ. նախահաշուի քննութիւնն ու հաստատութիւնը:

3. Ընտրութիւն նոր անդամների:

4. Հերթական հարցեր:

Ըստ սովորութեան առաջարկուեց նոր անդամների ընտրութիւնը կատարել: Այս անգամ ցանկութիւն էին յայտնել անդամագրուելու 6 հոգի.

սրանց մասին Վարչութեան նախագահը տուեց մանրամասն տեղեկութիւն: Ժողովի համաձայնութեամբ քուէարկութեան դրուեցին նաև անցեալ ժողովում չընտրուած պ. պ. դերասան Գալֆայեանը և Գրիգոր Աղաջանեանը, քանի որ դրանց վերաբերմամբ անցեալ ժողովին շատ քուէարկողներ թիւրիմացութեան մէջ են ընկել:

Քուէարկութեանը մասնակցում էին 28 հոգի: Քուէարկուած 8 հոգին էլ ընտրուեցին Ընկերութեան անդամ, ստանալով՝

1. Գ. Մէլիք-Ղարաբեօղեան	26 սպիտակ—2 ձեռնպահ
2. Մարտո	22 սպիտակ—3 սև 3 ձեռնպահ
3. Ալ. Քիշմիշեան	24 սպիտակ 4 սև
4. Արսէն Ղլտճեան	27 » 1 »
5. Մադաթ Պետրոսեան	25 » 3 »
6. Պաշտուր Բաբայեան	24 » 4 »
7. Ղեր. Գալֆայեան	23 » 5 »
8. Բազազ Աղաջանեան	28 »

Այնուհետև դրոււմ է օրակարգի առաջին հարցը և բժ. Ա. Զարգաբեանը կարդում է Վարչութեան կազմած նախահաշիւը, ըստ որի Ընկերութիւնը 1913 թուին մուտք է սպասում.

1. (Անդամների) անդամավճարներից	500 ո.
2. Շաբաթական դասախօսութիւններից և երեկոյթ.	100 ո.
3. Ներկայացումներից դրօսանքներից և այլն	500 ո.
4. Նուիրաբերութիւններից	5000 ո.
5. Տոկոսներ	100 ո.
	6200 ո.

Այդ մուտքի դիմաց Վարչութիւնը ելք նշանակել էր՝

1. 25% հիմնակ. դրամագլխից	1550 ո.
2. 10% Գրական ֆօնդի անձեռնմխելի գումար	465 ո.
3. Ընկ. անդամներին փոխարինարար տրուող	1395 ո.
4. Նպաստներ	1700 ո.
5. Գրասենեակի վարձ	300 ո.
6. Գործավարի ոտճիկ	300 ո.
7. Կահ կարասիքի	170 ո.
8. Դիւանական և փոստի ծախս	200 ո.
9. Ծառայի ոտճիկ	120 ո.
	6200 ո.

Պ. Երզնկեանը նկատում է, որ անհրաժեշտ է նախահաշուի կարդալուց առաջ տալ Վարչութեան առաջիկայ գործունէութեան վերաբերեալ զեկուցում, որը ժողովականները գտնում են իրաւացի:

Մի քանի կարծիքների փոխանակութիւնից յետոյ պ. Արշակ Յարութիւնեանի առաջարկութեամբ ժողովը ընդունում է, որ նախահաշուի վերաբերեալ զեկուցումից առաջ, զեկուցուի Վարչութեան մինչև այժմ ունեցած գործունէութեան մասին:

Վարչութեան նախագահ Յովհաննէս Թումանեանը զեկուցանում է, որ Վարչութիւնը այս մօտ երկու ամսուայ ընթացքում ստացել է նուէր 1600 ո.: Ապա որոշել և ընտրել է Վարչութիւնից դուրս՝ մի Մասնաժողով՝ կազմակերպիչու պարբերական երեկոյթների, դասախօսութիւնների, ինկատի կայ, որ Ընկերութեան անդամներն իրենց ընտանիքով ձրի մուտք ունենան երեկոյթներին, իսկ կողմակի մարդիկ՝ համեստ վճարով: Արդէն ի նկատի կայ գրական տօն կատարել նուիրած Ստեփանոս Նազարեանին, Ալիշանին, Սայեաթ-Նօվային, Գր. Արծրունուն և ուրիշներին: Բարեգործական Ընկերութիւնը և Դրամատիկական Ընկ. յօժարութեամբ Գրողների տրամադրութեան տակ են դրել, առաջինը՝ իր դահլիճը, երկրորդը՝ իր դերասանական խումբը:

Ապա ժողովի համաձայնութեամբ նախահաշիւը դրոււմ է քննութեան կէտ առ կէտ:

1 կէտ—100 անդամավճարներից մուտք 500 ո. ոմանք գտնում են այդ գումարը քիչ է, որ մօտ 100 անդամ կայ հէնց այժմ: Ժողովը բարեք է համարում միշտ ամենաքիչը նշանակել և 500 ո. թողնում է նոյնութեամբ. ի միջի այլոց հարց է առաջարկում, թէ երբուանից է սկսուում Ընկերութեան տարին: Վարչութեան կողմից առաջարկոււմ և ժողովի կողմից ընդունոււմ է՝ Ընկերութեան տարին սկսել առաջիկայ 1913 թուի յունւարից:

2 կէտ—Դասախօսութիւններից, երեկոյթներից 100 ուրբու վերաբերմամբ Վարչութեան նախագահը բացատրութիւն է տալիս, որ երեկոյթները պէտք է կրթական դեր կատարեն և շահադիտական ձգտումներ չունենան. ի միջի այլոց հաղորդում է, որ ի նկատի կայ հայ հեղինակների դրամատիկական երկերը, որպէս փորձ, առաջին անգամ ցուցադրուեն և երևան հանուեն նկարչական, երաժշտական արտադրութիւնները: Դասախօսութիւններն էլ միշտ կնուիրուեն գրական կամ գիտական խնդիրների:

Պ. Ալիխանեանը գտնում է, որ երեկոյթներից նոյնիսկ 100 ուրբու սպասել չի կարելի. գուցէ և պէտք կլինի փող ծախսել: Առաջարկում է հանել նախահաշուից այդ 100 ուրբուին, քանի որ դրա դիմաց ծախս չի նշանակուած:

Պ. Սողովեանը գտնում է, որ այդ գրական երեկոյթները պէտք է կազմեն մեր Ընկերութեան գործունէութեան ուղն ու ծուծը: Որպէս զի դրանք ցանկալի հետեանքներ ունենան, անհրաժեշտ է կանխօրէն լաւ խորհել և ըստ այնմ ծրագիր կազմել: Առաջարկոււմ է ձիշտ որոշել, թէ ովքեր կարող են ձրի մուտք ունենալ. ցանկալի է, որ միայն անդամները ձրի մուտք ունենան:

Շատ կարծիքներ են յայտնուում երեկոյթների մասին. ոմանք գտնում են, որ երեկոյթներից նշանակուած 100 ուրբուին քիչ է:

Պ. Ատրպետը առաջարկում է խուսափել ամեն մի ձրի բանից. վճարել լրագրներին յայտարարութիւնների համար և դասախօսներին, որով և իրաւունք կունենանք մուտք պահանջելու:

Պ. Լէօն գտնում է, որ այդ երեկոյթների վրայ պէտք է նայել այն

տեսակէտից, որ հայ գրողը կունենայ մի ժամադրաւայր և անցկացնի հաճելի մի քանի ժամեր: Այդպիսով ուրեմն անդամների հետ պէտք է լինեն նաև նրանց ընտանիքները: Երեկոյթները շահադիտական բնոյթ չպէտք է ունենան. Ընկերութիւնը նոյնիսկ նրանց համար փող պէտք է ծախսի. առաջարկում է դրա համար մի գումար դնել Վարչութեան տրամադրութեան տակ: Պ. Լէօն համաձայն է նոյնպէս դասախօսներին վարձատրելու սկըզբունքին, թէկուզ համեստ չափերով:

Պ. Արշակ Ղազարեանն աւելորդ է համարում երեկոյթների մանրամասնութիւններով զբաղուել. առաջարկում է սկզբունքով ընդունել երեկոյթների ծախսը և մանրամասնութիւնները թողնել Վարչութեանը:

Պ. Աշոտ Աթանասեանը տեղեկութիւններ է տալիս Թիֆլիսի հասարակական ժողովարանում ընտրուած կարգերի մասին, յայտնելով, որ այնտեղ անդամները վճարելով տարեկան վճարից 1 ուրլի աւել, իրաւունք են ունենում իրենց հետ տանել իրանց ընտանիքից նաև երկու հոգի, ուսանողների համար սահմանուած է 25 կ. մուտքի վճար:

Պ. Աթանասեանը յանձնարարելով այդ տեղեկութիւնները ժողովի ուշադրութեանը, իր կողմից առաջարկում է երեկոյթները բաժանել երկու կարգի. մէկը նեղ, ընտանեկան բնոյթով, ուր գան Ընկերութեան անդամները միայն, իսկ երկրորդն աւելի հանդիսաւոր, որը կը գրուի ընդարձակ դահլիճներում և ուր որ և է զբոյց ու վիճարանութիւն չի լինի:

Պ. Մարգարը յայտնում է, որ վաղուայ իրականութիւնը կարող է ի չիբ հանել մեր այժմեայ բոլոր ծրագիրները: Առաջարկում է տալ մի քանի երեկոյթներ և ապա նոր դրա համեմատ ծրագիր կազմել: Բողոքում է նոյնպէս նախահաշուին այդ ձևող քննելու դէմ: Նրա կարծիքով պէտք է կազմել առ այժմ ժամանակաւոր նախահաշիւ:

Պ. Գ. Իփէկեանը առաջարկում է տալ երեկոյթներին, դասախօսութիւններին հասարակական բնոյթ, որ նրանցից օգտուողները, որչափ կարելի է շատ լինեն:

Պ. Նախագահը, ի նկատի ունենալով պ. Մարգարի առաջարկը, հարցնում է. շարունակել սկսուած ձևով նախահաշուի քննութիւնը, թէ ոչ: Ժողովը որոշելով շարունակել քննութիւնն սկսուած ձևով, քուէարկութեամբ ընդունում է, որ երեկոյթների մանրամասնութիւնը մշակէ Վարչութիւնը և զեկուցէ հետեւեալ ժողովին:

3-րդ կէտ—ներկայացումներից, զբօսանքներից ստացուելիք 500 ո. առիթով պ. Ալիխանեանը յայտնում է, որ զբօսանքները թէ նիւթապէս և թէ բարոյապէս միայն բացասական արդիւնք են տալիս, մանաւանդ վերջին ժամանակներս և առաջարկում է դուրս ձգել զբօսանք բառը: Շատերը միանում են այդ կարծիքին:

Պ. Թումանեանը բացատրում է, որ զբօսանքը կանոնադրութեան այն կէտերից մէկն է, որ ընդմիշտ պէտք է անգործադրելի մնայ: Հասկանալի

է, որ Գրական Ընկերութիւնը զբօսանք կազմակերպելու տրամադրութիւն չպէտք է ունենայ:

Պ. Ազարաբն առաջարկում է այլ Ընկերութեան նման ունենալ տարեկան մէկ օր, որը կլինի նրա տօնը՝ երեկոյթների կամ ներկայացումների համար:

Ի վերջոյ որոշում է զբօսանք բառի տեղ դնել համերգ և 500 ուրլին թողնել նոյնութեամբ:

4-րդ կէտ—նուիրատուութիւն. նուիրատուութիւնից ստանալիք 5000 ո. տեղ Գրիգոր Վարդանեանը առաջարկում է 3000 ուրլի նշանակել:

Պ. Թումանեանը առաջարկում է ամենից առաջ ընդունել իբրև սկըզբունք որ Ընկերութիւնը ոչ մի դիմում չանի նուէր ստանալու, ինչպէս և տոմսակ ծախելու (բուռն ծափեր). վերջապէս թող լինի մեր մէջ մի ընկերութիւն, որը կարողանայ գործել առանց դիմումներ անելու:

Պ. պ. Երզնկեան և Մարգար առաջարկում են մտցնել նախահաշուի մէջ միայն ստացուած 1600 ո. պ. Մարգարն առաւարկում է նոյնպէս այսուհետև ստացուածը թողնել յաջորդ տարուան նախահաշուին:

Պ. Լէօն զարմանում է, որ դիմում չանելու որոշում են կայացնում և միևնոյն ժամանակ նախահաշուի մէջ մտնելիք 5000 ուրլիով Ընկերութիւնը հրապարակ է եկել մի գործ կատարելու և դրա համար նա յաճախ ստիպւած կլինի դիմումներ անելու. հէնց դիցուք այնպիսի մի դէպքում, երբ մեր ընկերներից մէկը կտառապի հիւանդութեամբ և հարկաւոր կլինի նրան անմիջական օգնութիւն ցոյց տալ: 5000 գտնում է շատ:

Պ. Աշոտ Աթանասեանը համաձայնում է, որ յատուկ դիմում չլինի հարուստներին. 5000 շատ չի գտնում Ընկերութեան առաջին տարուայ համար:

Պ. Թումանեանը բացատրում է, որ եղած նուէրները ստացուել են միանգամայն ինքնաբերաբար:

Պ. Մելիքեանը 1000 ո. նուիրելիս ասել է, եթէ Ընկերութիւնը դիմում անէր կստորագրէի 100 ուրլի. իսկ երբ դիմում չի լինում՝ տալիս եմ 1000 ուրլի:

Պ. Յովհաննէս Թումանեանը յայտնում է, որ Ընկերութիւնը ոչ թէ միայն նիւթապէս պէտք է բարձրացնել, այլ և բարոյապէս: Գլխաւորը նա գտնում է, որ պէտք է այնպէս անել որ Ընկերութիւնը սիրուի և այդպէս նրան մօտենան նուէրներ առաջարկին:

Պ. Երզնկեանը տարբերութիւն է դնում մասնաւոր մարդկանց դիմելու և հասարակութեանը կոչ անելու մէջ: Առաջինը Ընկերութիւնը չպէտք է գործադրի, իսկ երկրորդը, ինչպէս կանոնադրութեան մէջ էլ կայ, կարող է տեղի ունենալ:

Պ. Արշակ Յարութիւնեանը, որպէս Վարչութեան անդամ, յայտնում է որ պ. Յովհաննէս Թումանեանի յայտարարածը դիմում չանելու մասին Վարչութեան որոշում չէ, արլ ընդհանուր տրամադրութիւն. առաջարկում է այդ յայտարարածը պաշտօնապէս ընդունել Ընդհանուր Ժողովի կողմից:

Պ. Սոլովեանն առաջարկում է դարկ տալ ինքնօգնութեան զաղափարին, մասնաւոր դիմումների փոխարէն:

Նախագահը քուէարկութեան է դնում նախահաշուի 5000 ո. նոյնութեամբ թողնելու, նրան 3000 ո. 1600 ո. 1000 ուրբիւ իջեցնելու և ամբողջապէս դուրս ձգելու առաջարկները: Ոչ մէկը բացարձակ մեծամասնութիւն չի ստանում: Կրկին քուէարկութիւնից յետոյ համեմատական մեծամասնութեամբ ընդունւում է նախահաշուի մէջ մտցնելիք 5000 ուրբի փոխարէն 3000:

Դիմում չանելու պ. Թումանեանի առաջարկը քուէարկութիւն դնելուց առաջ պ. Մարգարը գտնում է, որ չպէտք է դիմում չանելու բացարձակ որոշում կայացնել, այլ պէտք է դիմում անել միայն, յօրեկանների և այլ կարիքների դէպքում:

Պ. Թումանեանի առաջարկութիւնը քուէարկւում է և 23 ձայնով անցնում է ոչ մի անհատական դիմում չանել և ընդունւում է բուն ծափերով: 5 կէտ—100 ը. տոկոսները իջեցնւում է 25 ուրբիւ:


Ուշ լինելու պատճառով, ժողովի զբաղմունքները ընդհատւում են, շաբոնակութիւնը նշանակելով յաջորդ կիրակի:

Վերջում ժողովը ընտրում է Վերաստուգիչ Մասնաժողովի 3 անդամներ և 2 փոխանդամներ: Առաջարկուած թիկնածուներից բացարձակ ձայնութեամբ ընտրւում են Մաղաթ Պետրոսեան, Յակոբ Յակոբեան և Յակոբ Աղաբաբեան. անձնափոխանորդներ—Երզնկեան Մարգիս սարկաւազ և Արովեան Անուշաւան:

Ժողովի վերջում պ. Յովհաննէս Թումանեանը յայտարարում է, որ եկող կիրակի Ընկերութեան երեկոյթների բացումն է:

Նիստը փակւում է 11¹/₂ ժամին տակելով 3¹/₂ ժամ:

Նախագահ՝ Իս. Յարութիւնեան



V

Արձանագրութիւն Կովկ. Հայ Գրողների Ընկերութեան Բ. Ընդհանուր (Դ. նիստ) ժողովի շարունակութեան.

1912 թ. 9-ն դեկտ.

Ժողովին նախագահում է պ. Իսահակ Յարութիւնեան: Քարտուղարը կարդում է նախկին ժողովի արձանագրութիւնը, որը չնչին փոփոխութիւններից յետոյ վաւերացւում է Ընդհանուր ժողովի կողմից: Այնուհետեւ քարտուղար Գուրգենի հրաժարուելու պատճառով ժողովը անցնում է նոր քարտուղարի ընտրութեան. միաձայն ընտրւում է Սարգիս սարկ. Երզնկեան: Ապա ժողովը անցնում է նոր անդամների ընտրութեան և զաղանի քուէարկութեամբ անցնում են հետեւեալ անձինք՝—1. Շաթիրեան Ա. (22 սպ. 5 սև). 2. Բաբուրեան Գ. (21 սպ. 5 սև. 1 ձեռն.). 3. Լազարեան Յով. (24—3). 4. Յարութիւնեան Ա. (24—3). 5. Տէր-Գրիգորեան Ջալալ (26—1). 6. Տէր-Գրիգորեան Ար. (24—3) և 7. օր. Տիգրանեան Արմ. (25—2):

Վերոյիշեալ անձանց քուէարկութիւնը կատարելուց յետոյ նախագահը կարդում է ժողովի զբաղմունքների հետեւեալ օրակարգը.

Ա. Ընտրութիւն նոր անդամների,

Բ. Փօնդ Արասխանեանի յիշատակին,

Գ. նախահաշուի քննութիւն

և Դ. ընթացիկ հարցեր, որից յետոյ առաջարկւում է յոտնկոյս յարգել նորոգ հանգուցեալ Ա. Արասխանեանի յիշատակը: Ժողովականները ոտքի են կանգնում: Ապա Վարչութեան նախագահ Յովհ. Թումանեանը մի համառօտ ակնարկ ձգելով հանգուցեալ Արասխանեանի կեանքի ու գրական գործունէութեան վրայ, յիշելով կրկին, որ Արասխանեանը այն անտեսագէտն էր, որ գիտութիւնների հայրենիքին—Եւրոպային—տուեց այնպիսի մի գործ, որով իր վրայ հրաւիրեց եւրոպական գիտնականների ուշադրութիւնը, որ Արասխանեանը հայրենիք վերադառնալով ձեռնամուխ եղաւ մեր իրականութեան մէջ այնպիսի մի հրատարակութեան, որպիսին «Մուրճն» էր, որ հանգուցեալը դեռ տարիներ առաջ մտածում էր Գրական Ընկերութեան հիմքը դրնել—ասում է նա—Կովկ. Հայ Գրողների Ընկերութեան Վարչութիւնը, իր գործունէութեան առաջին շրջանում, այն ժամանակ երբ նա, Արասխանեանը, գերեզման է իջնում՝ առաջարկւում է Ընդհանուր ժողովիդ, Ընկերութեան միջոցներից երկու հարիւր (200) ուրբի յատկացնել Արասխանեանի ֆօնդի համար, որի վրայ աւելացնելով նաև այդ նպատակով ստացուելիք նուիրաբերութիւններով հրատարակել այդ գումարներով Արասխանեանի յիշատակին մի գեղեցիկ ժողովածու:

Պ. Թումանեանի այս բացատրութիւններից յետոյ ժողովականներից պ. Լեօն գտնում է, որ այդ 200 ուրբի շատ քիչ է, մանաւանդ որ Արասխանեանի աշխատութիւնների հրատարակութեան հարց կայ:

Աղբալեան Ն.—հետաքրքրուում է իմանալ թէ հոմ գրեածքների հրատարակութեան համար է այդ ֆոնդը հիմնուելու:

Արաքսեան Ա.—Տալիս է մի քանի կարեւոր բացատրութիւններ և յայտնում է, որ երբ այդ հարցը Վարչութեան մէջ դրուեց, մենք աչքի առաջ ունէինք—ասում է նա—որ եթէ մեր կողմից նուիրենք 200 ուրբի և համոզուած լինելով նաև, որ այդ գումարի վրայ կաւելանայ և այլ նուիրարեութիւններ, որ կազմելով մի նկատելի գումար, հնարաւորութիւն կտայ մեզ հրատարակել հանգուցեալ Արաքսեանեանի անտիպ աշխատութիւնները:

Ղազարեան Ա.—Առաջարկում եմ Վարչութեան առաջարկը բաժանել երկու մասի—նախ՝ թէ Ընդհանուր Ժողովը ընդունում էր այդ առաջարկը թէ ոչ և ապա եթէ կընդունի՝ այն ժամանակ խօսել միայն ֆոնդ հիմնուելու ձևի մասին:

Գեղեան Յ.—Այդպիսի ֆոնդ հիմնելը համարում եմ բոլորովին անօգուտ և աւելորդ ձեռնարկութիւն, որովհետև մենք դորանով կը հարստացնենք միմիայն տպարանատէրերին և թղթավաճառներին: Աչքի առաջ ունենալով, որ մեր իրականութեան մէջ, շատ հեղինակներ կան, որոնք տրւել են գեղեցիկ հրատարակութիւններ, բայց այդ հեղինակի հրատարակութիւնները ֆաւոր է միայն գրավաճառի մօտ դարձած, աչքի առաջ ունենալով նաև, որ հանգուցեալ Արաքսեանեանը իբրև գրականագէտ և հրապարակախօս մեռաւ ծայր չքաւորութեան մէջ, առաջարկում եմ ֆոնդ հիմնել, սակայն այդ գումարը գործադրել ոչ թէ ժողովածուի հրատարակութեան—այլ՝ այդ ֆոնդի գումարից ստացուած տոկոսը տալ ներկայումս էլ գոյութիւն ունեցող Արաքսեանեաններին, որոնք գտնուում են ծայր չքաւորութեան մէջ:

Լեո.—Ես ևս ժողովածուին հակառակ եմ:

Լեյլի.—Ես համաձայն չեմ պ. Գեղեանի առաջարկութեան հետ և յարմար եմ գտնում նրա անտիպ աշխատութիւնները ի մի հաւաքել և հրատարակել յատկապէս Արաքսեանեանի գործերը:

Չմեկեան Մ.—Այդ բոլորը շատ անգամ ենք լսել, միայն մի գործնական միջոց, որ ես կառաջարկէի, այդ այն է, որ որքան կարելի է նրա կենսագրութիւնը ամփոփ մի բրօշուրով հրատարակել, որ մեր ապագայ սերունդները կարողանան ճանաչել թէ ով էր հանգուցեալ Արաքսեանեանը և ինչ ծառայութիւն է մատուցել նա մեր մայրենի գրականութեան: Ապա այդ կենսագրականի վաճառումից առաջացած գումարի տոկոսները միայն յատկացնել Գեղեանի մատնանշած խեղճ Արաքսեանեաններին:

Լեո.—Նախ, պարոններ, պէտք է ասեմ, որ այդ հրատարակութիւնը ինչպիսին էլ նա լինի, ոչ մի օգուտ չի տալ և բացի դորանից կովկ. Հայ Գրողների Ընկերութիւնը հրատարակչական ընկերութիւն չէ և մեր կանոնադրութիւնը այդ թոյլ չի տալիս: Այդ կարող է անել այլ հիմնարկութիւն, օր. Հրատարակչականը՝ բայց մեր հնարաւորութիւնից դա միանգամայն վեր է: Գրողների Ընկերութիւնը եթէ ցանկանում է յաւերժացնել Արաքսեանեանի յիշատակը, թող մի ստեպենդիա նշանակէ մի չքաւոր հայ գրողի համար,

բայց ոչ երբէք մի հրատարակութեան ձեռնամուխ լինի, որը ոչ կանոնադրութեամբ իրաւունք ունի և ոչ էլ նրա ժամանակն է ներում:

Մարգար.—Եթէ այստեղ խօսք լինէր նրա ընտանիքի կամ աղջկայ մասին, գուցէ համաձայն լինէի պ. Գեղեանի առաջարկութեան հետ, սակայն այստեղ այդպիսի հարց գոյութիւն չունի: Պէտք է յաւերժացնել Արաքսեանեանի յիշատակը որևէ բանով. ես գտնում եմ, որ Գրողների Ընկերութեան հէնց նպատակը պէտք է լինի գրական գործ: Իմ կարծիքով ամենագործնականը ժողովածուն է, որ կայ: Պէտք է անպայման հրատարակել մի ժողովածու, որի նիւթի մեծամասնութիւնը կը կազմի Արաքսեանեանի գրեածքներից և ճոխացրած հանգուցեալի պատկերներով: Ես գտնում եմ այդ ժողովածուի հրատարակութիւնը ամենակարեւորը:

Յարութիւնեան (Ջաւալեան).—Վարչութիւնն աչքի առաջ է ունեցիլ կազմել մի այնպիսի ֆոնդ, որ դա չըմնայ մեռած տառ: Իմ կարծիքով ժողովածուի միտքը պէտք է բոլորովին փոխել, իսկ եթէ այդ անհրաժեշտ է, այն ժամանակ խնդրել Հրատարակչակ. Ընկերութեան, որ նա ձեռնամուխ լինի, իսկ մենք ցոյց կը տանք մեր նիւթական ու բարոյական աջակցութիւնը: Ես դէմ եմ նաև այդ ֆոնդով որ և է ստեպենդիա նշանակելուն: Եթէ դուք ցանկանում էք յաւերժացնել Արաքսեանեանի յիշատակը, այն ժամանակ, այդ ֆոնդի տոկոսներից նշանակեցէք լաւագոյն հայ գրեածքների համար պրեմիայ և դուք առիթ կունենաք ամենայն տարի Արաքսեանեանի անունը լսել այստեղ: Ես առաջարկում եմ այդ փողով նշանակել զիտական կամ գեղարվեստական Արաքսեանեանի պրեմիայ:

Թումանեան Յովհ.—Ես ինչպէս տեսնում եմ Ընդհանուր Ժողովը համաձայն է Արաքսեանեանի անունով ֆոնդ հիմնուելուն, միայն ժողովականները գործադրութեան տարրեր ձևեր են առաջարկում: Եթէ մենք համաձայն ենք ֆոնդի մտքին, այն ժամանակ, պէտք է նախ և առաջ հաշիւ տանք մեզ, թէ ով էր Արաքսեանեանը, իսկ այդ հնարաւոր է միայն ժողովածուի հրատարակութեամբ: Երբ մենք կը հրատարակենք ժողովածուն, որոշ ժամանակից յետոյ չէ՞ որ յետ կը դալ գործադրուած գումարը և այն ժամանակ դարձեալ ձեռնից՝ Ընդհանուր Ժողովից է կախուած այսպէս կամ այնպէս գործադրել այդ գումարը: Գիրքը մենք որ տպում ենք, շատ սխալ է, որ մենք փողը ջուրն ենք ածում կամ կորցնում: Մեր իրականութեան մէջ այսպէս թէ այնպէս գիրքը ծախւում է: Մեր Ընկերութիւնը եթէ դնի այդ նպատակի համար 200 ուրբի, համոզուած պէտք է լինէք, որ դրսից էլ կը գայ անուաղն մի 500 ուրբի. ուրեմն մենք կունենանք 700 կամ ենթադրենք 1000 ուրբի: Այդ 1000 ուրբիին տարեկան պէտք է տայ ձեզ ամենաշատը 45—50 ուրբի տոկոս, որով դուք երբէք հնարաւորութիւն չէք ունենալ ապահովել կենդանի ֆաւորած Արաքսեանեաններին: Այստեղ առաջարկութիւններ են լինում դիմելու նաև Հրատարակչական Ընկերութեանը, որ նա նախաձեռնող լինի այդ ժողովածուի հրատարակութեան, իմ կարծիքով այդ էլ մի մեծ սխալ է, քանի որ մեր կանոնադրութիւնն էլ այդ իրաւունքը տալիս է մեզ:

Լեո.—Խնդրում եմ կարդալ կանոնադրութեան այդ կէտը:

Նախագահը կարգում է կանոնադրութեան 3-րդ յօդուածը:

ձուլութեան 3. Բան. — Ես Վարչութեան նախագահի առաջարկը չեմ ընդունում, չեմ ընդունում այն պարզ պատճառով, որովհետև սա Հրատարակչական ընկերութիւնն է: Գէնջեանի ասածները միանգամայն ճիշտ են: Դուք ուզում էք անշնչացած դիակին պատուած լինէք, իսկ այն միւս գոյութիւնն ունեցող Արասխանեանները, որ շալը փաթաթուած ման են գալիս չէք ուզում միջոցներ ձեռք առնել, որ նրանք էլ նրա օրին չը հասնեն: Նա գնաց, մենք պէտք է փրկենք կենդանի Արասխանեաններին, որոնք կեանքի մէջ տանջուած ու մաշուած ման են գալիս: Ո՛չ մի գրական ժողով չի կարող Արասխանեանին բարձրացնել, այդ անաչառ քննադատութեան և պատմութեան գործն է, որ ինչպէս Արասխանեանին, այնպէս էլ Լէօնին, Թումանեանին կը դնի ամենին էլ իրենց որոշ բարձրութեան վրայ: Ես առաջարկում եմ, որ եթէ Ընկերութիւնը միջոց ունի՝ Թող օգնի չքաւորութեան մէջ գտնուող հայ գրականագէտներին:

Արքանսեան Ա. — Ինձ թւում է, որ խօսողները ծանօթ չեն կանոնադրութեան ոգուն, որ այդպիսի առաջարկութիւններ են անում, երէկ մենք ստացանք Ռուս Գրողների Ընկերութեան կանոնադրութիւնները և գործունէութեան մանրամասն տեղեկութիւններ, որից երևում է, որ այդ ընկերութիւնը ոչ միայն իրաւունք ունի այս կամ այն գիրքը հրատարակելու, այլև՝ որոշ հեղինակներից նրանց հեղինակութիւնները գնելու, ինչպէս օր. Միխայլովսկու անուամբ ժողովածուները և այլն... Գալով այն հարցին, որ այդ փողի տոկոսներով պէտք է նպաստել չքաւոր հայ գրողներին, այդ էլ ձեռնտու չէ, որովհետև դրանից կըստացուի մի չնչին գումար, որով հնարաւորութիւն չի լինի որեւէ դրական գործ կատարել: Իմ կարծիքով, եթէ ժողովածու հրատարակենք, դրանից աւելի մեծ օգուտ կստանանք:

Լեօ. — Պ. նախագահը կարգաց կանոն. III-րդ յօդուածը և ինչպէս տեսանք այնտեղ անորոշ է ասուած: Ես գտնում եմ որ կանոնադրութեան այդ կէտի մասին դեռ կարիք կայ խօսելու և պարզաբանելու:

Սոյովեան Յ. — Այստեղ շարունակ խօսում ենք ինքնօգնութեան մասին, սակայն ինձ թւում է թէ մենք ինքնօգնութիւնը շատ նեղ ենք հասկանում: Գրողների Ընկերութիւնը պէտք է ինքնօգնութեան լայն խաւեր ստեղծի ժողովրդի համար և ես գտնում եմ, որ մեր Ընկերութիւնը եթէ ուզում է այդ նպատակին հասնել, պէտք է ձեռնամուխ լինի այդ հրատարակութեան, որպէս զի լայն կերպով ծանօթացնի մեր հասարակութեան՝ թէ ով էր Արասխանեանը: Գալով այն հարցին թէ իրաւունք ունի՞նք մենք հրատարակելու թէ ոչ, պէտք է ասեմ, որ ոչ միայն Ընկերութիւնը՝ այլ ամեն մարդ իրաւունք ունի հրատարակելու այս կամ այն գրուածքը:

Նախագահ. — Պարոնայք, այս հարցի շուրջը բաւականին խօսակցութիւն ունեցանք. ես կը դնեմ քուէարկութեան, կամենում էք էլի շարունակել թէ սպառուած էք համարում հարցը:

Ժողովականները ցանկանում են նախ պարզել կանոնադրութեան այդ կէտը, ապա նոր միայն անցնել վիճաբանութիւնների շարունակութեան:

Լեօ. — Իմ կարծիքով, Կովկասի Հայ Գրողների Ընկերութիւնը զուտ պրոֆեսիօնալ ընկերութիւն է և ոչ հրատարակչական: Կանոնադրութեանը գալով պէտք է ասեմ, որ այնտեղ կան կէտեր, որ պարզ չեն: Կանոնադրութեան III-րդ յօդուածի II-րդ կէտում ասուած է. «Հրատարակում է իր բերան թերթը այս առարկայի համար ներգործող օրէնսդրութիւններով սահմանուած կանոնների պահպանութեամբ». այստեղից պարզ երևում է, որ այդ թերթը պէտք է լինի Ընկերութեան բերան օրգանը և ոչ այլ հրատարակութիւններ, ինչպէս շատերը ճգնում են ապացուցել: Գալով Ռուսական Գրողների Ընկերութեան և ի պատասխան պ. Աթանասեանի, պէտք է ասեմ, որ այդ Ընկերութիւնը իր կանոնադրութեան մէջ ունի և հրատարակչական բաժինը, իսկ մերը զուտ պրոֆեսիօնալ է և մենք չունենք այդ իրաւունքը: Մեր Ընկերութիւնը եթէ ուզում է այդպիսի մի գործ կատարել, կարող է նպաստ տալ Հրատարակչական Ընկերութեանը, եթէ միայն նա յանձն կառնի այդ: Եթէ այսօր պէտք է Արասխանեանի յիշատակին ժողովածու հրատարակել, վաղը կը լինեն և այլ առիթներ նոյնանման հրատարակութիւններ շարունակելու: Բացի դրանից ես դեմ եմ նաև ցանկը փակելուն, պէտք է այս հարցը պարզաբանուի:

Աղբալեան Ն. — Ես առաջարկում եմ այս հարցը քննութիւնից հանել, որովհետև քննադատել կանոնադրութեան այս կամ այն կէտը կը նշանակէ իրաւաբանական մի գործ յանձն առնել, որ վեր է մեր կոմպետենցիայից: Ես կառաջարկէի թողնել այդ զուտ իրաւաբանականին վերաբերեալ խնդիրը և անցնել այն հարցին, թէ Վարչութիւնը կամ մենք իրաւունք ունենք 200 ռուբլի յատկացնելու ֆոնդին թէ ոչ: Ես համոզուած եմ, որ եթէ մենք շարունակենք այստեղ քննութեան առնել այնպիսի հարցեր, որ վեր է մեր ոյժերից՝ ապագայ ժողովներում մարդ չի գալ այստեղ: Առաջարկում եմ այդ թողնել Վարչութեանը տեղեկանալու, իսկ մենք անցնենք օրակարգի բուն հարցին: Ես առաջարկում եմ ընդհանուր ժողովին հիմնել այդ ֆոնդը, 200 ռուբլի դնել այդ նպատակով, իսկ գործադրութիւնը թողնել ապագային:

Ղազարեան Ա. — Ես անհրաժեշտ եմ գտնում կանոնադրութեան այդ կէտի մասին խօսել, որպէսզի ամեն անգամ ստիպուած չըլինենք տանել մեր կանոնադրութիւնը իրաւաբանների ձեռքը տալ:

Գուլոյեան. — Ես համամիտ եմ Աղբալեանի առաջարկութեանը:

Լիսիցեան Ս. — Պարոններ, եթէ մենք նայելու լինենք կանոնադրութեան II-րդ յօդուածի VI-րդ պարզաբանութեան վերջին պարբերութեան կը տեսնենք, որ ռուսերէն օրինակի մէջ պարզ ասուած է. «Объявлять конкурсы на научные, литературные и художественные произведения», իսկ «объявлять» կը նշանակի издавать — հրատարակել. ուրեմն խօսք չի կարող լինել այստեղ իրաւաբանական հարցի շօշափման մասին, քանի որ ինքը կանոնադրութիւնը թոյլ է տալիս այդ:

Յարութիւնեան Ա. (Ջալալեան). — Մեր խօսքը միայն իրաւաբանական բացատրութիւնների մասին չէ, այլ՝ նպատակայարմարութեան: Ինձ համար բոլորովին ցաւալի չէ, որ Կովկ. Հ. Գ. Ընկ. զբաղուէր հրատարակութիւն-

ների դործով, քանի որ մեր առաջ կայ մի այլ ընկերութիւն, որ զբաղուած է դորանով — դա Հրատարակչական ընկերութիւնն է: Թողէք նրան պարապել այդ դործով և մենք իզուր մեր ժամանակը չվատենք: Գալով կանոնադր. այդ կէտին, ես գտնում եմ, որ մենք կարող ենք և իրաւունք ունենք առհասարակ հրատարակութեամբ պարապելու:

Մարգար.— Ես զարմանում եմ, որ այդ հարցը բերիք կանոնադրութեան հետ կապեցիք: Կանոնադրութեան մէջ հրատարակութեան մասին ոչ մի կէտ չկայ: Վարչութիւնն առաջարկում է մի ժողովածու հրատարակել, իսկ այստեղ զարմանք են յայտնում թէ մենք իրաւունք չունենք, կանոնադ. մեզ թոյլ չի տալիս, սա Հրատարակչական Ընկերութիւնն չէ և այլն. բայց ասացէք, պարոններ, միթէ ներսիսեան դպրանոցը կամ Կ. Հ. Բ. Ընկ. հրատարակչական ընկերութիւններ են, թէ՞ նրանց կանոնադրութիւններն է թելադրում, որ իրանց պատմութիւնները հրատարակեցին: Այստեղ միայն նըպատակայարմարութեան տեսակէտ կայ և աւելորդ է կապել կանոնադրութեան հետ:

Տեք-Գրիգորեան Ա.— Ես տեսնում եմ, որ այստեղ երկու հարց իրար հետ խառնում են: Առաջին՝ իրաւունք ունենք թէ՞ ոչ և երկրորդ՝ գործադրութեան հարցը: Գալով առաջին և ամենակարեւոր հարցին, պէտք է ասեմ, որ օրէնքի տեսակէտից ոչ մի արգելք չկայ և ընկերութիւններն էլ կարող են կատարել այն բոլոր գործերը ինչ որ հեղինակը:

Չմեկեան Մ.— Ենթադրենք թէ Հրատարակչական Ընկերութիւնը չի ուզում հրատարակել, ո՞վ պէտք է հրատարակէ, էլի մենք չպէտք է հրատարակե՞նք:

Լալայեան Ե.— Պարոններ, Հրատարակչական ընկ. դիմելն էլ Վարչութեան մէջ խօսուել է, սակայն ընդհանուր ժողովում չի դրուել, որպէսզի թիւրիմացութիւններ առաջ չգան: Իսկ իմ կարծիքով այս ընկերութեան մէջ տարբեր տեսակի և տարբեր ուղղութեան գրողներ միաբանել են փոխադարձաբար միմեանց օգնելու. հետևապէս և՛ այս ընկերութեան գործունէութեան գլխաւոր կէտը փոխադարձ օգնութիւնը պիտի լինի, և ոչ հրատարակութիւնները, որոնց վերաբերմամբ չի կարող համաձայնութիւն կայանալ տարբեր տեսակի և մանաւանդ տարբեր ուղղութեան գրողների միջև. ուստի և ես ես գտնում եմ, որ պէտք է թողնել հրատարակութիւնների միտքը:

Թումանեան Յով.— Պարոններ, դուք պէտք է աչքի առաջ ունենաք, որ պ. Տէք-Գրիգորեանը իրաւաբան է և որպէս այդպիսին նրա բացատրութիւնները իրաւաբանական, որ իմ կարծիքով պէտք է վերջ տայ այս վիճաբանութեան: Ես միանգամայն ինձ բաւարարուած եմ գտնում:

Վարդապետեան.— Այստեղ Վարչութիւնը մի առաջարկ է բերել ընդհանուր ժողով և ես զարմանում եմ, որ Վարչութեան անդամներ՝ պարոնայք Լէօն, Յարութիւնեանը, Լալայեանը տարբեր կարծիքներ են յայտնում, այդ նշանակում է, որ հարցը, նոյնիսկ Վարչութեան մէջ լաւ չէ մշակուել:

Սովովեան Յ.— Օրգանը ոչ միայն պէտք է պրօֆեսիօնալ լինի, այլ և

գեղարուեստական, որովհետեւ կանոնադրութիւնն էլ թոյլ է տալիս այդ:

Ղազարեան Գ.— Պարոնայք, ես չեմ ժխտում, որ մենք իրաւունք ունենք հրատարակելու, սակայն գտնում եմ, որ մեր ժամանակը շատ սուղ է դորանով զբաղուելու, ուստի առաջարկում եմ խուսափել ժողովածուի հրատարակութիւնից և առաջարկել Կով. Հ. Հրատ. Ընկերութեան, որ նա յանձնն առնի այդ հրատարակութիւնը:

Թեմիսեան.— Ես անհատապէս գտնելով, որ գրողներու ընկ. իրաւունք ունի հրատարակութեան, կառաջարկէի վերաքննութեան ենթարկել կանոնադրութիւնը, խուսափելու համար ապագայ թիւրիմացութիւններից:

Թումանեան Յ.— Յիշեցէք, պարոններ, որ անցեալ սնգամ խօսք եղաւ թէ դասախօսութիւնները առանձին հրատարակելու իրաւունք ունենք, ինչու չպիտի ունենանք ժողովածու հրատարակելու իրաւունքը: Պ. Նախագահը գտնելով հարցը բաւականին ծեծուած, քուէարկութեան է դնում նախ այն հարցը, թէ ընկերութիւնն իրաւունք ունի՞ հրատարակել որևէ գրութեմ: Այս առաջարկութիւնն անցնում է 30 ձայնով ընդդէմ 4-ի:

Այնուհետև պ. Նախագահը քուէարկութեան է դնում Վարչութեան առաջարկը, որ ստանում է 19 ձայն ընդդէմ 6-ի ¹⁾:

Ներքոյ բանաձեւը, որ առաջարկում է պ. Աղբալեանը, հետևեալն է. «Զեռք բերել Ա. Արասխանեանի հեղինակութիւնների իրաւունքը: Տպագրել այդ հեղինակութիւնները: Դրամը յետ դառնալուց յետոյ, նրա տոկոսները յատկացնել իրրև մրցանակ լաւագոյն տնտեսական հետազոտութեան համար՝ հայ կեանքի մասին»: Այս բանաձեւը քուէարկում է և ստանում է 13 ձայն ընդդէմ 8-ի:

Ներքոյ բանաձեւը, որ առաջարկում է պ. Ա. Յարութիւնեանը (Զամալեան) հետևեալն է՝ «Ժողովը լսելով վարչութեան առաջարկը յաւերժացնելու Արասխանեանի յիշատակը որոշեց. ա) ի նկատի ունենալով, որ Արասխանեանի գրական հասարակական նկարագիրը յայտնի չէ հասարակութեան ընդարձակ շրջաններին, խնդրել Հրատարակչական Ընկերութեանը հրատարակել Արասխանեանի կենսագրութիւնը և նրա գրական հասարակական գործունէութեան մասին մի ուսումնասիրութիւն, խոստանալով բարոյապէս աջակցել նրան: բ) Կազմել Արասխանեանի անուան մի ֆոնդ յատկացնելով դրա համար ընկերութեան միջոցներից 200 բուրի, որի տոկոսները կազմելու են տարեկան պրեմիայ, հայերէն լեզուով լաւագոյն տնտեսագիտական աշխատութեան համար»: Այս բանաձեւն ստանում է 16 ձայն ընդդէմ 7-ի:

Չորրորդ բանաձեւը, որ առաջարկում է պ. Չմեկեանը հետևեալն է՝ «Աչքի առաջ ունենալով, որ անհրաժեշտ է Արասխանեանին ծանօթացնել հասարակութեան լայն խաւերին, իսկ դա հնարաւոր է նրա կենսագրութեան միջոցով, առաջարկում եմ հրատարակել նրա կենսագրութիւնը պատկերով հանդերձ, որով թէ նրա յիշատակը յաւերժացրած կը լինենք և թէ այդ պա-

*) Այս և հետևեալ բանաձեւերի քուէարկութեան ժամանակ ժողովին ներկայ են միայն 25 հոգի: Ծան. քարտուղարի:

հանջին բաւարարութիւն տուած: Այս առաջարկը ստանում է 11 ձայն ընդդէմ 12-ի: Գուէարկութեան հետեանքը պ. Նախագահը ժողովականներին ծանօթացնելուց յետոյ, յայտնում է, որ առաջարկուած բանաձևերից ոչ մէկը ձայների բացարձակ մեծամասնութիւն չի ստացել: Միայն Վարչութեան առաջարկը պէտք է համարել ընդունուած, իբրև ամենից շատ ձայն ստացողը: Վարչութեան բանաձևը անցած է համարում:

Յայտարարում է 10 րոպէ ընդմիջում:

Ընդմիջումից յետոյ պ. Յով. Թումանեանը, նախ քան Գրական Ընկ. կանոնադրութեան ընթերցումը ծանօթացնում է Ռուս. գրողների ընկ. ուղարկած գրութեան հետ, որ Ռուս գր. ընկ. ստանալով Հ. Գր. Ընկ. դիմումը, որով վերջինս յայտնելով, որ Թիֆլիզում բացուած է արդէն Կովկ. Հ. Գր. Ընկերութիւն, խնդրում է տեղեկութիւն տալ իր գործունէութեան մասին: Ընդհանուր ժողովի ցանկութեամբ կարդացւում է այդ գրութիւնը, որով Ռուս Գրողների Ընկերութիւնը, ողջունելով Հայ Գրող. Ընկերութեան երևան գալը ցանկանում է նրան յարատեւութիւն և բարգաւաճում: Ժողովը ծափահարութեամբ է ընդունում այդ գրութիւնը: Պ. Ն. Աղբալեանը, առաջարկում է ընդհանուր ժողովի անունից շնորհակալութիւն յայտնել Ռուս Գրողների ընկերութեան Վարչութեանը իր ուշադրութեան առթիւ:

Ապա Վարչութեան կողմից պ. Աթանասեանը կարդում է նախ՝ Փոնդի կանոնադրութեան նախաբանը և ապա անցնում է մշակած կանոնադրութեան ընթերցման, որից յետոյ խօսք են խնդրում հետևեալ անձինք.

Յարութիւնեան Ա. (Ջաւախեան),—Աչքի առաջ ունենալով ժամանակի սղութիւնը ևս կառավարկէի նախ՝ կանոնադրութեան մասին անել ընդհանուր դիտողութիւններ և կամ ընտրել մի մասնաժողով, որ այդ մասնաժողովը քննի այդ կանոնադրութիւնը և ապա ներկայացնի Ընդ. Ժողովին:

Մալխասեան Յովհ.—Ես ևս համաձայն եմ յաջորդ ժողովին քննութեան առնել կանոնադրութեան հարցը. այժմ ժամանակ չկայ:

Լիսիցեան Ս.—Ես դէմ եմ մասնաժողով ընտրելուն: Ես կարծում եմ, որ այդ կանոնադրութիւնը ընդօրինակուած պէտք է լինի ռուսական օրինակից, ուստի առաջարկում եմ ընդունել այդ կանոնադրութիւնը և մի տարուայ գործունէութիւնից յետոյ քննութեան առնենք և հաստատենք:

Մինասեան ԲԺ.—Ես ևս գտնում եմ, որ այժմ մենք հնարաւորութիւն չունենք քննութեան առնել այդ կանոնադրութիւնը: Ես կառավարկէի արպագրել այդ կանոնադրութիւնը, բաժանել բոլոր անդամներին, որպէսզի հնարաւորութիւն ունենանք իւրաքանչիւր կէտի մասին լուրջ մտածել և ապա այստեղ կարծիք յայտնենք:

Արամասեան Ա.—Նախ՝ պէտք է պատասխանեմ պ. Լիսիցեանին, որ մենք ճիշտ է թէ ևս աչքի առաջ ենք ունեցել Ռուսական կանոնադր., սակայն ամբողջովին չենք օգտուել նրանից, որովհետև Ռուս գրողները բոլորովին այլ պայմանների մէջ են գտնուում, իսկ մերը՝ այլ: Ես ևս կառավարկէի ընտրել մի մասնաժողով, կարելի է և տպագրել ու ցրել մեր անդամներին:

Պ. Նախագահը առաջարկութիւնները դնում է քուէարկութեան: Այն

բանաձևը թէ ընտրել մի մասնաժողով, որ Վարչութեան հետ միասին քննեն կանոնադրութիւնը և ապա ներկայացնեն ընդհանուր ժողովին, նախօրօք տպագրելով առանձին կամ մամուլում, այս բանաձևն անցնում է միաձայն:

Այնուհետև մասնաժողովի անդամների ընտրութեան հարցն է առաջ գալիս. ոմանք առաջարկում են մասնաժողովի անդամներ ընտրել 3 հոգուց, ոմանք՝ 5, ոմանք էլ՝ 7: Այս առաջարկութիւնները ևս պ. Նախագահը քուէարկութեան է դնում: Անցնում է 7 հոգուց մասնաժողով ընտրելու առաջարկը: Ապա պ. Նախագահն առաջարկում է տալ մասնաժողովի անդամների անունները, սակայն ժողովին ներկայ եղողներից ում անունն էլ որ տալիս են՝ բոլորն էլ հրաժարում են, ուստի մասնաժողովի հարցն էլ մընում է յաջորդ ժողովին:

Ժամը 12 ին ժողովը փակուած է յայտարարում:

Նախագահ ընդհ. ժողովի՝ Իս. Յարութիւնեան

Քարտուղար՝ Ս. ս. Երզնկեան

○○○Ⓞ○○○

VI.

Հայ գրողների ընկերութեան երկրորդ ընդհանուր ժողովի շարունակութիւնը

1912 թ. դեկտեմբերի 23-ին

Ժողովը կայանում է 22 անդամների ներկայութեամբ. Նախագահ է ընտրւում՝ պ. Նիկողայոս Աղբալեանը, քարտուղար՝ Ա. Գուլօեան:

Կարդացւում և քիչ փոփոխութիւններով հաստատւում է նախկին ժողովի արձանագրութիւնը:

Պ. Նախագահը կարդում է օրակարգի հարցերը.

ա) քննութիւն գրական Փօնդի

բ) քննութիւն և հաստատութիւն 1913 թուի նախահաշուի.

գ) ընտրութիւն նոր անդամների.

Պ. Նախագահը տեղեկացնում է, որ անցեալ ժողովի որոշումը՝ ընտրել մասնաժողով քննելու գրական Փօնդի կանոնադրութիւնը իրագործուած չէ և հարցնում է ժողովի կարծիքն այդ մասին: Շատերը կարծիք են յայտնում. Նախագահը առաջարկում է անփոփոխ թողնել անցեալ ժողովի որոշումը՝ այն է ընտրել մասնաժողով և տպագրել ու տարածել անդամների մէջ գրական Փօնդի հրահանգը, ժողովը նախ քուէարկութեամբ որոշում է անփոփոխ

թողնել անցեալ ժողովի որոշումը. ապա ընտրուում է մասնաժողով՝ բաղկացած հետևեալ անձերից

1. պ. Տ. Գիւլալեան
2. պ. Ռ. Սանազատեան
3. պ. Գր. Վարդանեան
4. պ. Փ. Վարդապետեան
5. պ. Գ. Ղազարեան
6. պ. Վալադեան
7. պ. Յ. Ալիխանեան

Այս հարցի սպառնալից յետոյ, ժողովը նախահաշիւն առանց ֆոնդի հրահանգի քննութեան աւարտած լինելու՝ քննել չը կարողանալով, յետաձգում է նրան: Այնուհետեւ նախագահը կարգում է վարչութեան նախագահ՝ Յովհաննէս Թումանեանի նամակը, որը հիւանդութեան պատճառով ժողովին գալ չկարողանալով, յանձնարարում էր ընտրել Ընկերութեան անդամ մի շարք գրականագէտների, որոնց հետ միասին կարգուում են նաեւ մի քանի այլ անգամագործել ցանկացողների անուններ: Սրանցից մի քանիսի վերաբերմամբ տրուում են տեղեկութիւններ: Տուփեր չ'լինելու պատճառով, քուէարկութիւնը կատարուում է թերթիկներով: Ընտրուեցին հետևեալ անձինք. քուէարկութեան մասնակցում են 22 հոգի:

1. Փ. Վարդանեան	22	ձայնով
2. Գր. Չալխուշեան	22	»
3. Բժ. Բուդուղեան	22	»
4. Նիկ. Ադոնց	22	»
✓ 5. Amiko (Օհ. Մարութեան)	19	»
6. Յար. Թումանեան	18	»
7. Աշերօն (Յովսէփ Միրզոյեան)	17	» «գիւղատնտես»
8. Գարեգին Գարդիշեան	19	»
9. Սահակ Թորոսեան	22	»
10. Մկրտիչ Բարխուդարեան	22	»
11. Ապրիլեան Յուսիկ քահանայ	17	»
12. Տէր-Դանիէլեան Միսաք	21	»
13. Երուանդ Շահազիզ	22	»

Ժողովի վերջում ցանկութիւն յայտնուեց, որ այսուհետեւ վարչութիւնը ընդհանուր ժողով հրաւիրելիս լրագրներում այդ մասին մի անգամ յայտարարէ և դրա հետ միասին անդամներին զատ-զատ հրաւերներ ուղարկէ: Ժողովը փակուեց ժամը 2 ին:

Ընդհանուր ժողովի նախագահ՝ Ն. Աղբալեանց

VII.

Հայ-գրողների Կովկասեան Ընկերութեան 1913 թ. Ա. Ընդհանուր ժողովի արձանագրութիւնը

1913 թուի մարտի 2-ին տեղի ունեցաւ (քաղաքային Դումայի դահլիճում) Հ. Գ. Կ. Ընկ. Ընդհանուր ժողովը՝ մասնակցութեամբ սկզբում՝ 23 և ապա 32 անդամի և նախագահութեամբ պ. Նիկ. Աղբալեանի:

Ժողովի օրակարգն էր.

- 1) Նոր անդամների ընտրութիւն:
- 2) Գրական ֆոնդի կանոնադրութեան նախագիծ:
- 3) Նախահաշուի հաստատութիւն:
- 4) Ընթացիկ հարցեր:

1. Ընկերութեան անդամագրուելու ցանկութիւն ենյայտնել հետևեալ անձինք, որոնց անունները և դրուեցին քուէարկութեան.

1. Ստեփան Տէր-Աւետիքեան ստացաւ	21	սպ. 2 սև
2. Շիրինեան Կարապետ	19	» 4 »
3. Ակունեան Յովհաննէս	22	» 1 »
4. Փիրումեան Տիգրան	20	» 3 »
5. Այվազեան Բազրատ	21	» 2 »
6. Զանեան Ա.	18	» 5 »
7. Միրաքեան Վահան	22	» 1 »
8. Սանլարեան Յակոբ	21	» 2 »
9. Ղազարեան Անուշաւան	20	» 3 »
10. Այվազեան Յակոբ	20	» 3 »
11. Ֆրանգեան Երևանդ	22	» 1 »
12. Թադէոսեան Թադէոս	21	» 2 »
13. Տէր-Սարգսեան-Պարզեան Ալ.	17	» 6 »
14. Մկրտումեան Գէորգ քահ.	20	» 3 »
15. Դանիէլիէիկեան Սօֆիա	20	» 3 »
16. Տէր-Յովնանեան Արշալոյս	18	» 5 »
17. Տէր-Յարութիւնեան Յակոբ	18	» 5 »
18. Բէգ-Յովսէփեան Աստուածատուր	17	» 6 »
19. Սաչատրեան Հայկ	19	» 4 »
20. Խշոյեան Ենովք	17	» 6 »
21. Տէր-Պօղոսեան Գրիգոր	20	» 3 »
22. Տիտոսեան (Գրիգորեան) Արշալոյս	16	» 7 »
23. Բաշինջաղեան Գէորգ	22	» 1 »
24. Բահաթրեան Կատարինէ	20	» 3 »
25. Սանազատեան Յուսիկ	20	» 3 »
26. Համալեան Սիմէօն	17	» 6 »
27. Աբէլեան Ներսէս	23	» 0 »
22. Մելիք. Շահնազարեան Կոստանդին	22	» 1 »

Ընտրութիւններին մասնակցեցին 23 անդամ: Քուէարկողներէց երկուսը՝ Ա. Բէգ-Յովսէփեան և Ալ. Պարզեան՝ ցանկութիւն են յայտնած եղել քուէարկուելու դեռ նախորդ ընդհանուր ժողովին, սակայն այն ժամանակ նրանցից առաջինը (Բէգ-Յովսէփեան) դուրս էր հանուել քուէարկուելիք անունների ցանկից՝ ինչ-ինչ պատճառներով: Իսկ երկրորդը (Ալ. Պարզեան), քուէարկուելով՝ չէր անցել:

Տ. Յովհաննիսեանը սկզբունքային հարց է բարձրացնում, (վերոյիշեալ ընտրութիւններից առաջ) թէ արդեօք՝ կարելի է երկրորդ անգամ քուէարկել այն անձանց, որոնք արդէն քուէարկուել, բայց չեն անցել: Այդ առթիւ եղան թեր և դէմ կարծիքներ. Եր. Լալայեանը առաջարկում է, որ վարչութիւնը ամեն անգամ, երբ մի անգամ չանցած անձնաւորութիւն երկրորդ անգամ է քուէարկութեան դրուում, պատճառաբանուած զեկուցում ներկայացնի՝ նոր քուէարկութեան անհրաժեշտութեան մասին: Ժողովը համամիտ է այդ առաջարկին և հարցը սպառուած է համարուում:

2. Գրական Ֆոնդի կանոնադրութեան նախագիծը ներկայացուեց ժողովին տպագրուած այն ձևով, ինչ կերպ որ մշակել էր նախորդ ընդհ. ժողովում ընտրուած յատուկ մասնաժողովի ձեռքով: Նախագիծն ընդունուում է հետեւեալ փոփոխութիւններով.

Ա. Ամբողջ § 4 (չորրորդ), ա, բ, և գ, ստորաբաժանումներով հանդերձ, վերածւում է հետեւեալ (Տ. Յովհաննիսեանի և Ն. Աղբալեանի առաջարկած) բանաձևի. — § 4. Նպաստներ տրուում են իբրև օժանդակութիւն կամ փոխատուութիւն:

« § 5. Օժանդակութիւն տրուում է Ընկերութեան անդամներին և անդամների այրիներին ու որբերին՝ միանուագ կամ տևողաբար հետեւեալ դէպքերում. ա) հիւանդութեան, ծերութեան և արտակարգ կարիքի ժամանակ և բ) Ընկերութեան անդամների զիջական և գրական-գեղարուեստական կիսատ երկերն աւարտելու համար:

Ծանօթ. — Տեական նպաստի բաշխումը դադարում է, հէնց որ վերանում են այն հանգամանքները, որոնք առիթ էին եղել նպաստ տալուն»:

Բ. § 5-ում «անդամներից երեք հոգի» դարձրուեց «... մեկ հոգի»:

Գ. § 6-ին կցուեց հետեւեալ ծանօթութիւնը.

«Անյետաձգելի կարիքի դէպքում վարչութեան նախագահը իրաւունք ունի, վարչութեան ուրիշ երկու անդամների համաձայնութիւնը ստանալով, օժանդակութիւն տալ մինչև քսան և հինգ (25) բուբլի, որի մասին նա պարտաւոր է զեկուցանել վարչութեան մօտակայ նիստին ի հաստատութիւն»:

Դ. § 9-ը փոխւում է այսպէս.

«Փոխ է տրուում ոչ աւել քան երեք հարիւր բուբլի վեց ամսով և հինգ (5) տոկոսով, որ հանուում է սկզբից»:

Ե. § 11-ը, ըստ էութեան ընդունուելով, այսպէս է ձևակերպուում.

«Եթէ չնայած վերոյիշեալ երաշխաւորութիւններին, անհնար լինի կամ մաւոր կերպով գանձել փոխ տուած գումարները, վարչութիւնը կարող է գանձել փոխառուի կայքից դատական միջոցով»:

§ 14-ը Հանուեց ամբողջովին: Դրա փոխարէն, որպէս վերջին յօդուած գրուելու է § 6-ը՝ փոփոխուած ձևով (տես վերը):

Ժամանակի ուշ լինելու պատճառով, նախահաշուի քննութիւնն ու միւս ընթացիկ հարցերը յետաձգուեցին յաջորդ ժողովին:

Նախագահ՝ Ն. Աղբալեան

Քարտուղար՝ Վ. Վալադեան

VIII

Թիֆլիս, 1913 թ. մարտի 24-ին, քաղաքային Դումայի դահլիճում, երեկ. ժամը 7½-ին տեղի ունեցաւ Հայ Գրողների Ընկերութեան անդամների ա. Ընդհանուր ժողովի շարունակութիւնը 40 հոգու ներկայութեամբ: Նախագահում է ա. Ընդհ. Ժ. Նախագահ Ն. Աղբալեան, քարտուղար ընտրվեց Ս. Եսայեան:

Կարդացուեց ու վաւերացրուեց նախկին Ընդ. ժողովի արձանագրութիւնը:

Նախագահը յայտնում է օրակարգը 1) Նախահաշուի քննութեան շարունակութիւնը, 2) Նոր անդամների ընտրութիւն և 3) Ընթացիկ հարցեր:

Քննելով նախահաշուի ելքի յօդուածները, Ընդհ. ժողովը բարուոք համարեց կահ-կարասիքի համար յատկացրված 170 ուրլին դարձնել 500 ու., գործավարի տարեկան 300 բ. ուճիկը—360 բ.: Բոլոր ծախսերից յետոյ մնացորդ գումարը հաւասարապէս կէսը յատկացնուում է փոխատուութեան, կէսը՝ օժանդակութեան: Նախահաշուի ընդհանուր ամփոփումն է.

Մուտք.

ա) 100 անդամավճար	500 բ.
բ) Դասախօս. երեկոյթներից	100 բ.
գ) Ներկայացում. համերգից	500 բ.
դ) Նուիրատուութիւններ	3000 բ.
ե) % 0/0	25 բ.
	4125 բ.

Ելք.

ա) 25% հիմն. դրամագլխ.	1031 բ. 25 կ.
բ) Փոխատու գումար	806 բ. 87 կ.

գ) Օժանդակութեան գումար . . .	506 ռ. 88 կ.
դ) Գրասենեակի վարձ . . .	300 ռ. —
ե) Գործավարի ուժիկ . . .	360 ռ. —
զ) Կահ-կարասիք . . .	500 ռ. —
է) Դիւանական ծախք . . .	200 ռ. —
ը) Ծառայի ուժիկ . . .	120 ռ. —
	4125 ռ. —

Համաձայն Վարչութեան ղեկուցման, ի նկատի ունենալով որ եկամուտը նախահաշուով նախատեսածից կարող է աւելի լինել, օրինակ ինչպէս Ընկ. 100 անդամի տեղ արդէն ունի 150, և երեկոյթների հասոյթը ստացուել է կրկնակի (100 ռ. փոխարէն 200 ռ.),—Ընդհ. ժողովը ընդունեց, որ Վարչութիւնը բոլոր լինելիք յաւելումները կաւելացնէ փոխառու և օժանդակութեան գումարների վրայ:

Այսպիսով 1913 թ. ելեմտի նախահաշիւը յայտարարուեց հաստատուած:

Ապա Ընդհ. ժողովը իր քննութեան խնդիր դարձրեց ընթացիկ հարցերը, թողնելով նոր անդամների ընտրութեան քուէարկութիւնը ժողովի վերջին:

Ա. Երզնկեան յիշեցնելով որ վերջերս «Հորիզոն» օրաթերթում բանակուել է տեղի ունենում Վարչութեան նախագահ Յ. Թումանեանի և Վարչ. անդամ Ե. Լալայեանի միջև հանգուցեալ Ա. Արասխանեանի գրքերի հարցի շուրջ, խնդրում է պարզել այդ գործի էութիւնը ներկայ Ընդհանուր ժողովում:

Թումանեան ղեկուցանում է եղելութիւնը. երբ Գրական Ընկ. նախաձեռնութեամբ թաղվեց Ա. Արասխանեանը, հանգուցեալի ազգական Մ. Բունիաթեան, որ և հոգաց թաղման բոլոր ծախքը, Մօսկվայից Թիֆլիս եկած ժամանակ Գրական Ընկերութեանը շնորհակալութիւն յայտնելով հանդերձ թաղման հոգատարութեան համար, միևնոյն ժամանակ պատրաստակամութիւն արտայայտեց Յ. Թումանեանին—տալու Արասխանեանի գրքերը Հայ Գրական Ընկերութեանը պահելու համար: Մինչ այդ հանգուցեալի ձեռագրերը, բերված լինելով Ախալքալաքից, գտնվում էին իր Թումանեանի մօտ: Վերջինս Բունիաթեանի կամքի մասին ղեկուցեց Վարչութեան նիստում, ուր և ներկայ է եղել Լալայեանը: Սակայն Լալայեան այդ նիստում ոչինչ չէ խօսում. այլ, թաղման օրերում Ազգագրական Ընկ. դահլիճում կայացած 3—4 նիստերի համար խորհրդի կողմից պահանջում է Գրողների Ընկ. Վարչութիւնից 25 ռ. և կրկին 5 ռ. ինչ որ ծախսերի համար, պատճառաբանելով թէ Ազգ. Ընկ. կապ չունի Արասխանեանի հետ: Սրանից յետոյ Լալայեան գնում է Բունիաթեանի մօտ և համոզում է նրան տալ Արասխանեանի գրադարանը ոչ թէ Գրողների, այլ Ազգագրական Ընկերութեանը: Բունիաթեանը խնդրում է այդ մասին ժողով գումարել և հրաւիրել նաև Թումանեանին, բայց Լալայեան այդ ժողովին հրաւիրում է Գրողների Ընկ. Վարչութեան անդամ-գանձապահ ԲԺ. Զարգարեանին, որ ներկայ չէր եղել Վարչութեան վերոյիշեալ նիստին և անտեղեակ էր հարցին:

Բացի այդ Լալայեան հաւատացրել է Բունիաթեանին, թէ Գրողների Ընկ. գրադարան պահելու իրաւունք չունի, որի մասին նա գրում է նոյն իսկ մամուլի մէջ: Վարչութեան անդամ Լալայեանի այդպիսի վարմունքը որակելով տգեղ ու ներհակ Գրական Ընկ. շահերին, Թումանեան, ընդգծելով հարցի բարոյական կողմը, պահանջում է, որպէսզի Ընդհ. ժողովը այդ առիթով իր վերաբերմունքը յայտնի որոշակի ու խիստ կերպով:

Եւ. Լալայեան, խօսք առնելով, ասում է. «Գրողների Ընկերութեան վարչական ժողովը որոշեց, որ Ընկ. գրասենեակը լինի Ազգ. Ընկ. բնակարանի մէջ, ամսական 25 ռուբլով: Թէև Ազգ. Ընկ. խորհուրդը մերժեց իր բնակարանի փոքրութեան պատճառով, սակայն ես խնդրեցի, որ գոնէ մի քանի ամիս թոյլ տրուի պայմանով, ստացուած վարձով ես գրքերի պահարաններ առնեմ: Զիջելով իմ խնդրին, խորհուրդը թոյլ տուեց: Այնուհետև կանոնաւոր կերպով Գրողների Ընկ. ժողովները կայանում էին մեղմօտ, բայց մի օր Վարչ. անդամ Աթանասեան առաջարկեց տնայնագ. ու գիւղատնտ. Ընկ. վարձած բնակարանի երկու սենեակը վարձել Գրողների Ընկ. համար և Վարչութիւնը համաձայնեց: Մինչ այդ ես արդէն գնել էի մի պահարան 26 ռ. մի ռուբլին ինձանից աւելացնելով: Իրան Թումանեանին ես հաշիւ ներկայացրի, որի մէջ յայտնում էի թէ 5 ռ. 35 կ. ծախս եմ արել հեռագրի ու այլ բաների վրայ և 25 ռ. էլ բնակարանի վարձ եմ սպասում, միևնոյն ժամանակ 20 ռ. անդամավճար եմ ստացել: Թումանեան մինչև այժմ չէ վճարել 10 ռ. 35 կ-ը: Այս պարզ հաշուին այլ գունաւորում է տալիս նա:

«Ինչ վերաբերում է Արասխանեանի գրադարանի հարցին՝ փաստը հետեւալն է: Արասխանեանի թաղումից 5 օր յետոյ, ինչպէս այլ, այնպէս և «Հորիզոն» № 275-ում (13 դեկտ. 1912 թ.) յայտնեցի, որ Հայոց Ազգ. թանգարանը ստանալով Արասխանեանի դազադի արկղը՝ պատուիրեց նրանից շինել պահարան՝ Արասխանեանի հրատարակութիւնները, ձեռագրերը ու զանազան իրեր ու գրքեր պահելու համար: Իսկ պահարանի վրայ գնել նրա պատկերը: Սրանից մի շաբաթ յետոյ խնդրեցի ԲԺ. Զարգարեանին՝ որ մեր թանգարանի զոկական բաժանմունքի նախագահն է՝ գումարել զոկական մասնաժողովի նիստ խորհրդակցելու՝ թէ ինչպէս կարող ենք իրագործել իմ յիշած ծրագիրը: Զարգարեանը ասաց, որ սպասենք Բունիաթեանը գալ Մօսկուայից: Երբ վերջինս եկաւ, Զարգարեանը ժողով գումարեց առանց նրա հետ որևէ բան խօսելու և կամ ժողովի հրաւիրելու: Ժողովը որոշեց խնդրել Արասխանեանի կտակահատարներին նուիրել Արասխանեանի գրադարանը Ազգ. Ընկ. զոկական բաժանմունքին: Աւետիս Զարգարեան, որ այս մասնաժողովի գանձապահն է և ներկայ էր ժողովին, տուեց իր հաւանութիւնը ոչ թէ նուիրելու, այլ աւանդելու, սակայն ասաց, որ հարկաւոր է միւս կտակահատարների համաձայնութիւնը ևս առնել. ուստի և մի երկրորդ ժողով նշանակեցին, որին և հրաւիրուեց պ. Բունիաթեան: Վերջինս պատասխանեց թէ տկար է ու չէ կարող գալ: Այդ պատճառով ԲԺ. Զարգարեան գնաց նրա մօտ, խօսեց հետը և, գալով ժողով, յայտնեց թէ

պ. Բունիաթեանը ևս համաձայն է: Մասնաժողովը որոշում կայացրեց և նոյնիսկ արկղից պատրաստուած պահարանի ծախքը իր վրայ վերցրեց: Մի շաբաթ յետոյ պ. Բունիաթեան անձամբ բերեց գրքերը:

Ապա Լալայեան ժխտում է Թումանեանի այն ասածը՝ թէ Վարչութեան մէջ խօսք է եղել Արասխանեանի գրքերի և Բունիաթեանի՝ Թումանեանին յայտնած պատրաստակամութեան մասին հէնց իր՝ Լալայեանի ներկայութեամբ, մանաւանդ որ Թումանեանի յայտարարութեամբ Գրողների Ընկ. Վարչութիւնը ոչ մի դիմում չը պէտք է անէ: «Բունիաթեանից ոչ մի թուղթ չէ ստացուած—լրացնում է Լալայեան—թէ Արասխանեանի գրքերը յանձնելու է Գրական Ընկ. իսկ եթէ պ. Թումանեանը յայտնել է նիստում, դա դեռ պարտաւորեցուցիչ չէ՝ որ այդ առիթով մի ուրիշ ընկերութեան ծրագիրները բացուեն»: Նոյնը պէտք է ասեմ Ախվերդեանի գրքերի առիթով, որովհետեւ Գրողների Ընկ. միջոցով չէ, որ մենք ճանաչում ենք օր. Ախվերդեանին. մենք ենք հրատարակել նրա հօր հաւաքած աշուղների երգերը, նա շատ վաղուց կապուած է մեր՝ Ազգ. Ընկ. հետ»:

Վերջում Լալայեան պարզում է իր վերաբերմունքը դէպի Գրողների Ընկերութիւնը, ասելով որ նա պէտք է կրէ սոսկ փոխադարձ օգնութեան բնոյթ: Այդպէս է նա ըմբռնել Ընկ. նպատակը, որի հիմնադիրներից մինն էլ ինքն է, ինչպէս և Վարչութեան անդամ: Գրողների Ընկ.-ը իրաւունք չունի զբաղուել հրատարակութեամբ և կամ գրադարան պահել:

Ա. Յաւուքիւնեան, նկատելով որ գոյութիւն ունեցող տարածաշրջանութիւնը ստեղծում է անախորժ մթնոլորդ, կողմնակից է որ խնդիրը լուսաբանուի բազմակողմանի կերպով:

Ներկեան իբրև հարցապնդող, չըզոհացած երկուստեք բացատրութիւններից, պնդում է հարցի աւելի պարզաբանութեան վրայ:

Յ. Թումանեան հեզնում է, որ Լալայեան յիրաւի իր իրաւունքը հիմնեց Արասխանեանի դաճաղի արկղի վրայ: Թումանեան բացէ ի բաց յայտարարում է, որ արկղը Ազգ. Ընկ. ուղարկելու գործին Վարչութեան անդամներից և ոչ մինը մասնակից չէ եղել: Վարչութիւնը չէր կարող գրասենեակի նկատմամբ ընդունել Լալայեանի առաջարկը, քանի որ արդէն Հրատարակչ. Ընկ. էր առաջարկել իր գրասենեակը ձրի: Բայց որ Լալայեան 30 ուրբի արդէն վերցրել էր անդամավճարների գումարներից, այդ փաստ է և կարող են վկայել Վարչութեան մնացած անդամները, որոնք արդարև ճշտում են, ասելով որ Ընկ. գործերում կայ Լալայեանի ստորագրութիւնը և ապա Թումանեանի միւս հարցին պատասխանում են թէ գրադարանի մասին խօսք եղել է Վարչութեան նիստում, այն էլ Լալայեանի ներկայութեամբ:

Ասրպէս, ինչպէս և Մ. Աւետիսեան գտնում են, որ իրաւական տեսակէտից ներկայ ժողովը չէ կարող քննել խնդիրը: Աւետիսեան ընդունում է, որ այսուհետեւ Գրողների Ընկ. Վարչ. անդամ ընտրելիս պէտք է չընտրել այնպիսի անձանց, որոնք անդամ են մի ուրիշ Ընկերութեան Վարչութեան մէջ:

Մ. Չմեկեան կարծում է, որ ներկայ հարցը ամենից առաջ պէտք է ներկայացրած լինէր Վարչութեանը:

Թումանեան, շարունակելով, Ախվերդեանի 40 կտոր գրքի առիթով շեշտում է Լալայեանի վարմունքը, որ երկրորդ անգամ դարձեալ Վարչութեան նիստում իմանալով որ Թումանեան Սայեաթ-Նօվայի երեկոյթի առիթով եղել է օր. Ախվերդեանի մօտ և խօսք է բացուել գրքերի մասին, առանց որ և է բան յայտնելու, միւս օրը շտապում է օրիորդի մօտ, վարկաբեկում է Գրական Ընկերութիւնը, հաւատացնում է որ Ընկ. գրադարանի իրաւունք չունի, և երբ օրիորդը սկսում է պաշտպանութեան խօսք ասել, Լալայեանը առարկում է թէ իրանք միանալու են մի ընկերութեան մէջ և այդ ձևով ստանում է Հախվերդեանից 40 կտոր գիրք: Փաստը այն է, որ Լալայեան իբրև Վարչութեան անդամ հակառակ է վարուել Ընկ. շահերին: Այնուհետև շեշտելով, որ Գրողների Ընկ. հակառակ Լալայեանի անգիտանալուն, իրաւունք ունի ունենալ սեփական մատենադարաններ, հրատարակութիւն անել, Թումանեան գտնում է, որ Գրողների Ընկ. մէջ, ուր նստած են մարդիկ գրականութեան, գիտութեան ու հրապարակախօսութեան անունով, չի կարելի հանդուրժել փաստերի աղաւաղումն: Հարցը բնաւ նիւթականի մէջ չէ կայանում, այլ բարոյական կողմի կշռի մասին է խօսքը:

Տ. Յովհաննիսեան կարևորը հարցի սկզբունքային կողմն է համարում, որ Վարչութեան մի անդամը ճիշտ չէ ըմբռնում Ընկ. կանոնադրութիւնը: Հոետօրի կարծիքով, Բունիաթեանի և Ախվերդեանի ասածները այսօրուայ քննութիւնից պէտք է դուրս մնան: Գրողների Ընկ. միանգամայն բարոյական իրաւունք ունէր ստանալ Արասխանեանի գրադարանը: Ապագայի նըկատմամբ գոնէ պէտք է ի նկատի ունենալ սկզբունքային հարցը:

Ա. Արաւաեսեան հաստատում է, որ Թումանեան զեկուցեց Մ. Բունիաթեանի յայտնածի մասին՝ վերաբերեալ Արասխանեանի գրքերը այս Ընկերութեանը յանձնելու հարցին: Լալայեան ներկայ էր նիստում, բայց ոչինչ չասաց: Երբ շաբաթից յետոյ, երբ Լալայեանի վարմունքը յայտնի դարձաւ, Աթանասեան այդ առիթով Առաջնորդարանում հանդիպելով դիմում է Լալայեանին, որ ասում է, «Իսկ ի՞նչ էիք կարծում, միթէ թողած մեր Ընկերութիւնը, ես պէտք է մտածէի ձեր Ընկերութեան շահերի մասին»:

Ռ. Խանազատ, նոյնպէս փաստացի ճշտումներ յայտնելով Լալայեանի ասածների դիմաց, գտնում է որ խնդիրը պարզ է.—Լալայեան եղել է Վարչութեան նիստում և չէ յայտնել իր յետագայ անելիքների մասին. ուրեմն նա վարուել է գաղտագողի կերպով:

Նախագահը նկատողութիւն է անում վերջին բառի դէմ:

Վալադեան կարծում է, որ հարցին պէտք է վերաբերուել անտարբեր: Գլխաւորը սկզբունքային երկու կէտերն են. նախ կարող է, արդեօք, Ընկ. որեւէ անդամ, որ մի վատ դեր է խաղացել, մնալ վարչութեան մէջ, և երկրորդ՝ որ քանի կանոնադրութեան մէջ պարզօրէն մատնանշուած է մատենադարանների պահելու մասին, ինչպէս կարելի է ժխտել այդ:

Նր. Լալայեան նկատում է, որ Թումանեանն է յեղաշրջում իրողութեան:

թիւնը: Օր. Ախվէրդեանը, Լալայեանի ասելով յատկապէս այցելել է Ազգ. Ընկ. գրադարանը և, լիովին գոհ մնալով տեսածից, յայտնել է Լալայեանին որ գրքում նրա մասին չարամիտ լուրեր են տարածում: «Ես ուրախութեամբ կը մասնակցեմ ամեն մի ընկ. մէջ, —ասում է Լալայեան, —եթէ տեսնեմ որ այդ ընկ. ընթանում է որոշ ընդգծուած ճանապարհով: Գործելով սկզբունքով, ես կամենում եմ որպէս զի Հայ Գրողների Ընկ. լինի զուտ փոխադարձ օգնութեան բնաւորութեան, իսկ Ազգ.-ը — մասնագիտական»:

Նախագահը ձեակերպում է խօսակցութիւնները:

Երգնկեան աւելի նպատակայարմար է գտնում ընտրել մասնաժողով, որի փաստացի քննութեան հետեանքի մասն իրազեկ կանուր Ընդհ. Ժողովին:

Կ. Շիրինեան գտնում է, որ եթէ սառը դատենք, կը տեսնենք, որ ոչ մի արտակարգ բան տեղի չի ունեցել: Եղածը պայմանաւորում է այն մոլեռանդ սիրով, որ ունի Լալայեանը ազգագրութեան նկատմամբ: Լալայեան ապրում է Ազգ. Ընկերութեամբ, շնչում է նրանով: Մօտենալով խնդրին այս մասշտաբով, կերևայ որ Լալայեանը այնքան էլ յանցաւոր չէ:

Ա. Յարութիւնեան Լալայեանի վարմունքին մօտենում է բարոյական և Ընկ. շահերի տեսակէտից: Վերջին իմաստով նա վարուել է անհարգատ կերպով, սակայն չի կարելի արատ ձգել նրա վրայ: Հարկաւոր է ընդգծել ժողովի մէջ, որ Լալայեան Վարչութեան նիստում չէ յայտնել իր անելիքի մասին և վարուել է անհարգատ կերպով:

Գ. Մելիք-Ղարաբեօկեան անկօրէկտ է համարում ի հարկէ, եթէ Լալայեան գրադարանը ստանալու մասին ոչինչ չէ ասել Վարչութեան նիստում: Բայց միւս կողմից նա քանիցս լսել է անձամբ Լալայեանից, որ ցանկանում է Արասխանեանի գրքերը ձեռք բերել: Ինքը Բունիաթեանը յայտնել է Մելիք-Ղարաբեօկեանին, որ աւելի կամենում է գրադարանը Ազգ. Ընկ.-ը յանձնել: Տեղի ունեցած միջադէպի մասին պէտք է ցաւել միայն. հետևաբար մասնաժողով ընտրել միտք չունի:

Յ. Թումանեան ասում է, «Ես զգում եմ, հաւատում, որ խօսում եմ մի ընկերութեան մէջ, որ ուրիշներին առաջնորդելու վսեմ կոչման է հետամուտ: Բարոյապէս ուժեղ Հայ Գրողների Ընկերութեան մէջ ես դիմում եմ ձեզ, պարոններ, և ասում. «Լսեցիք ինձ էլ, Լալայեանին էլ. լաւ լսեցիք, թէ ինչպէս նա երեք անճշտութիւններ ասաց, որ իբր Վարչութեան մէջ գրադարանի մասին խօսք չէ եղել, որ ինքը չէ եղել Վարչութեան նիստում, և վերջապէս որ նա իրաւունք է վերապահում իրան չը բանալ իր ծրագիրները: Ինչպէս կարելի է տանել Վարչութեան անդամի այս տեսակ հակասութիւնները: Չէ որ, փառք Աստծու, կայ արձանագրութիւն, ստորագրուած հէնց իր Լալայեանի ձեռքով: Չէ որ կան կենդանի վկաներ: Այսօրինակ աննօրմալ երևոյթներ օտար պէտք է լինեն այս նորահաստատ Ընկերութիւնից»: Թումանեան սպասում է ժողովի կտրուկ վերաբերմունքին, այլապէս Վարչութիւնը ստիպուած կը լինի հրաժարուել:

Ասրապէս դարձեալ, յենուելով Կանոնադրութեան § 18-ի վրայ, բողոքում է խնդիրը Ընդհ. Ժողովում քննելու գէտ:

Տ. Յովհաննիսեան, համակարծիք չը լինելով քննիչ մասնաժողով ընտրելու առաջարկութեան, ասում է որ պէտք է բարեացակամ վերաբերմունք ցոյց տալ: Խոհեմութիւնը պահանջում է, նկատի առնելով որ մեր Ընկ. նոր է և կարևոր դեր ունի կատարելու ապագայում, հարցին սուր կերպարանք չտալ:

Լ. Դանիէլեան երկուստեք բացատրութիւնների մէջ խստութիւն է տեսնում: Հարկ չը կայ մասնաժողով ընտրել, պէտք է հարցը թողնել ու ցաւ յայտնել, ու ցանկութիւն՝ որպէս զի ապագայում նման դէպքեր չը կրկնուեն:

Իփիկեան հարցը դնում է շեշտակի. ըստ երևոյթին մի գրադարան գաղտնագողի կերպով անցել է մէկի ձեռքից միւսին, ուրեմն աստառը ինտրիգայի վրայ է հիմնուած: Ամենից էականը այդ ինտրիգայի եղած կամ չեղած լինելու պարզաբանութիւնը պէտք է լինի: Եթէ Լալայեան ուրանում է ինտրիգայի գոյութիւնը, ուրեմն քննիչ մասնաժողովը անհրաժեշտ է:

Նախագահը նկատում է, որ ինքը՝ Լալայեան ևս չէ հերքում գրադարանը ստանալու իրողութիւնը:

Գր. Վարդանեան ընդունում է, որ Լալայեան իսկապէս շնչում է Ազգագրականով Փանատիկ անձնութեամբ: Բայց Հայ Գրողների Ընկ.-ն էլ իր շունչը ունի: Վարդանեան ապշած է, որ Լալայեան անտես է անում ընկ. կանոնադրութիւնը: Այստեղ Վարչութեան պատիւն է վիրաւորուած: Ընդհ. Ժողովը իր անվստահութեան քուէն պէտք է տայ Լալայեանին:

Նախագահը նկատելով, որ խնդիրը աւելի են ծանրացնում, ասում է որ Լալայեանի հոգեբանութիւնը այլ կերպ չէր կարող վարուել: Բայց մի բան պարզ է, որ նրա վարմունքի մէջ ոչ մի անձնական շահ չը կայ: Նրան դեկավարել է սոսկ մենամոլութիւնը: Պէտք է ցաւ յայտնել և դիմել հերթական գործերին:

Ա. Ղազարեան, Յ. Մալխասեան, Տ. Դանիէլ-Բեկ նոյնպէս կողմնակից են, որ խնդրին վերջ դրուի:

Յ. Թումանեան կրկին պնդում է խնդրի բարոյական կողմի վրայ: Հարցը այն չէ, որ Արասխանեանի գրքերը ստացել է ոչ թէ Գրական, այլ Ազգագրական ընկերութիւնը. այլ հարցը այն է, որ այդ գրքերը տանելու համար եր. Լալայեան, մինչև անգամ լինելով Գրական ընկ. անդամ և Վարչութեան անդամ, աշխատել է մոլորեցնել մարդկանց, հաւատացնելով թէ Գրական Ընկերութիւնը իր կանոնադրութեամբ գրադարան պահելու իրաւունքից զուրկ է, մինչդեռ ունի. հաւատացրել է թէ յիշեալ երկու ընկերութիւնները միանալու են, այնիսկ այդ տեսակ բան չը կայ և չի կարող լինել: Եղել է Լալայեանը վարչութեան նիստերին, լսել է, լուր և գնալով իր դատապարտելի քայլը արել: Այդ վարմունքը ոչ մենամոլութեան արգասիք է և ոչ էլ խնդիրը պէտք է թողել: Չէ որ ինքը Լալայեանը չէ ժխտում այն, ինչ որ այստեղ խօսուեց: Ուրեմն երկու կողմերից մինը մեղաւոր է, հետևաբար և արժանի Ընդհանուր Ժողովի հեղինակաւոր վերաբերմունքին:

Եր. Լալայեան իր վերջին խօսքում պաշտպանում է իր նախկին ասած-

ները, ընդգծելով, որ գրադարանի հարցին տեղեակ է եղել և Վարչութեան անդամ-գանձապահ ԲԺ. Զարգարեան: Լալայեան աշխատանքի բաժանումը անհրաժեշտ է գտնում: Լէօն Նոյնպէս կողմնակից էր, որ Հայ Գրողների Ընկերութիւնը լինի միայն փոխադարձ օգնութեան բնաւորութեան, բայց երբ տեսաւ, որ իրան համեմատ չեն, հեռացաւ: «Ես կրկին ասում եմ—առարկում է Լալայեան, որ գործել եմ միշտ որոշ գաղափարով: Ես իմ 5000 ռ. արժեցող գրադարանը նուիրել եմ Ազգագրական ընկերութեանը: Բայց սին խօսքերը անօգուտ են. եթէ պ. Թումանեան ցանկանում է որ Գրողների ընկ. գրադարան ունենայ, ինչո՞ւ իր հարուստ գրադարանը չէ նուիրում այդ ընկերութեանը: Ես իմ վերաբերմունքի մէջ ոչինչ փոփոխութեան չեմ գտնում»:

Հ. Գիւլսթր յայտնում է, որ Մոսկուայում գտնուած ժամանակ անձամբ լսել է Բուսիսթեանից, որ Արաքսեանեանի գրքերը արուելու են Հայ Գրողների Ընկերութեանը:

Նախագահը, ամփոփելով եղած առաջարկութիւնները, քուէարկութեան է դնում քննիչ մասնաժողով ընտրելու առաջարկը, որ բաց քուէարկութեամբ չանցաւ:

Այնուհետեւ բանաձեւեր են առաջարկում Ա. Յարութիւնեանի և Ս. Եսայեանի կողմից, որպիսի բանաձեւերը կցւում են ներկայ արձանագրութեան: Ընդհանուր ժողովը ընդունում է Նախագահի առաջարկած բանաձեւը՝ Յ. Ալիխանեանի լրացումով՝ հետեւեալ ձևակերպութեամբ.—

«Ընդհանուր ժողովը ցաւ է յայտնում պ. Երուանդ Լալայեանի դէպի Ընկերութեան շահերը ցոյց տուած անկողնէյս ու անհարագաս վերաբերմունքի համար եւ, հաւանութիւն տալով Վարչութեան միջնաշրջանայ գործունէութեանը, անցնում է հերթական գործերին»:

Եր. Լալայեան յուզուած բացականչում է. «Ես իմ խորին ցաւակցութիւնն եմ յայտնում, որ ներկայ Վարչութիւնը սպանեց գրական ֆօնդը: Երանի է, որ հիմնուի նոր Ընկերութիւն» և ապա հեռանում է:

Նախագահը առարկում է՝ թէ յոյս ունի, որ Վարչութիւնը, ընդհակառակն, կը պահպանէ ֆօնդը և կը զարգացնէ այն:

Վերջում գաղտնի քուէարկութեամբ Ընկ. անդամներ են ընտրւում— համաձայն վաղօրօք յայտնած ցանկութեան— ճարտարապետ Թ. Թումանեան ստանալով 29 սպ. ու 1 սև, Մամբէ Մասենջեան 26 սպ.—4 սև, Տ. Տերունի 24 սպ.—4 սև, Ա. Վարդանեան—22 սպ.—8 սև, Գ. Տեր-Բաղդասարեան և Գ. Ենգիբարեան—20-ական սպ. ու 10-ական սև:

Ժողովը փակուեց Ժ. 11¹/₂-ին:

Նախագահ Ընդհ. Ժողովի՝ Ն. Աղբալեան

Քարտուղար՝ Ս. Եսայեան

IX

1913 թուի նոյեմբերի 14-ին Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան դահլիճում կայացաւ Կովկասի Հայ Գրողների Ընկերութեան Ընդհանուր ժողովը՝ Ընկերութեան 26 անդամների ներկայութեամբ:

Վարչութեան նախագահ պ. Յովհաննէս Թումանեանը բանալով նիստը, համաձայն Ընկերութեան կանոնադրութեան XX յօդուածի՝ կանոնաւոր համարեց ներկայ Ընդհանուր ժողովը և առաջարկեց ընտրել նախագահ ու քարտուղար:

Բաց քուէարկութեամբ նախագահ ընտրուեց պ. Մինաս Բերբերեանը, իսկ քարտուղար՝ Գարեգին Գարդիշեանը:

Պ. Նախագահի առաջարկութեամբ Ընդհանուր ժողովը յօանկայս յարգեց Սիմէօն Զաւարեանի, Ալէքսանդր Քալանթարի և Կոստանդին Պատիսեանի յիշատակները:

Կարդացուեց և հաստատուեց Ընկերութեան նախորդ՝ մարտի 24-ին կայացած Ընդհանուր ժողովի արձանագրութիւնը, որից յետոյ ժողովը զբաղուեց օրակարգի խնդիրների քննութեամբ. իսկ օրակարգը հետեւեալն էր.

1) Վարչութեան 2 անդամի և 3 փոխանգամի ընտրութիւն.

2) Նոր անդամների ընտրութիւն.

3) Սայեաթ-Նովայի աշխատութիւնների տպագրութեան հարցը.

4) Սայեաթ-Նովայի մահարձանի բացումը և 5) ընթացիկ հարցեր:

Ժողովը ամենից առաջ զբաղուեց նոր անդամների ընտրութեամբ. գաղտնի քուէարկութեամբ Ընկերութեան նոր անդամներ ընտրուեցին.

1. Սիւսանթո,	ստանալով 25 սպիտակ և 2 սև քուէ.
2. Մ. Պոստիկեան,	26 » 1 »
3. ԲԺ. Մ. Բուդուղեան,	26 » 1 »
4. Յակոբ Քաչարեան	25 » 2 »
5. Գէորդ Պատիսեան	23 » 4 »
6. Յովհաննէս Կարապետեան	23 » 4 »
7. Յովհ. Մկրտումեան	21 » 5 »
8. Գրիգոր Գրիգորեան	21 » 5 »
9. Աւետիք Սահակեան	24 » 3 »
10. Սարգիս Երկանեան	24 » 3 »
11. տ. Հեղինէ Մելիք-Հայկազեան	24 » 2 »
12. Ար. Տիգրանեան	23 » 3 »
13. իշխ. Միքայէլ Թումանեան	21 » 5 »
14. Վարդգէս Ահարոնեան	21 » 5 »

Այս ընտրութիւնից յետոյ ժողովը զբաղւում է օրակարգի այլ խնդիրների քննութեամբ, որին մասնակցում են նաև նոր անդամներից մի քանիսը:

Վարչութեան նախագահ պ. Յովհաննէս Թումանեանը զեկուցում է Ժողովին, որ առաջիկայ դեկտեմբերի 1-ին տեղի է ունենալու Սայեաթ-Նովայի մահարձանի բացումը, ուստի և հրաւիրում է Ընկերութեան անդամ-

ներին ներկայ լինելու այդ հանդիսին: Ձեկուցում է նաև, որ Վարչութիւնն արդէն միջոցներ է ձեռք առել հրատարակելու Սայեաթ-Նովայի երգերի ժողովածուն: Վարչութիւնը մտադրութիւն ունի, ասաւ պ. Թումանեանը, հրատարակելու առ այժմ Հախվերդեանի ժողովածուի բոլոր երգերը, քերականութեամբ և բազբքով հանդերձ, կցելով այդ ամենին նաև Գ. Աստուածատրեանի՝ Պետերբուրգի կայսերական թանգարանում պահուող ձեռագրից քաղած 10 երգերը: Այս հրատարակութիւնը պէտք է լինէր մաքուր, լաւ թղթի վրայ և որքան կարելի է մատչելի լինէր բուն ժողովրդին: Բացի այս ժողովրդական հրատարակութիւնից Վարչութեան կարծիքով պէտք էր ապագայում Սայեաթ-Նովայի աշխատութիւնների մի գիտական հրատարակութիւն ևս անել: Վարչութեան նախագահը զեկուցեց նաև այն, որ Սայեաթ-Նովայի անուամբ կազմակերպուած երեկոյթներից այնքան դրամ է գոյացել, որ կարելի կըլինի թէ նրա մահարձանի և թէ այդ ժողովրդական հրատարակութեան ծախսերը հոգալ:

Այստեղ միջանկեալ պ. Յակոբ Աղաբաբեանը յայտարարում է, որ ս. Գէորգի ծխական հոգաբարձութիւնը որոշել է մահարձանի բացման հանդէսի օրը դպրոցի սենեակներից 3-ը դնել Հայ Գրողների Ընկերութեան տրամադրութեան տակ:

Ժողովի կողմից գոհունակութեամբ է ընդունւում այս յայտարարութիւնը:

Պ. Մակար Չմեկեանը աւելորդ է համարում քերականութիւնը կցել այդ հրատարակութեանը:

Պ. Լեօն ցանկալի է համարում մի քիչ աւելի մանրամասն զեկուցում լսել Վարչութիւնից այս հրատարակութեան վրայ լինելիք ծախսերի մասին:

Վարչութեան անդամ Բ. Գիւլս ա. Բահանայ Աղանեանը պ. Լեօն յարուցած այդ հարցի առթիւ յայտնում է, որ գիրքը տպագրուելու է 2500 օրինակ և բաղկացած է լինելու 140—144 երեսից. երկու տեսակ թուղթ է ընտրուած հրատարակութեան համար՝ միջակ և աւելի լաւ. միջակ թղթի վրայ տպագրելու դէպքում ամբողջ հրատարակութիւնն արժենալու է 391 ռուբլի, իսկ լաւ թղթի վրայ տպագրելու դէպքում՝ 475 ռուբլի:

Վարչութեան անդամի այս բացատրութիւնը լսելուց յետոյ պ. Լեօն գտնում է, որ անհրաժեշտ է լաւ թղթի վրայ տպագրել, քանի որ տարբերութիւնը համեմատաբար մի չնչին գումար է. գրքի գինը այնուամենայնիւ պէտք է մատչելի դարձնել բուն ժողովրդին, որովհետև իրօք հէնց այդ ժողովուրդն է, ասում է պ. Լեօն, որ կարգում է մեր գրականութիւնը և այս դէպքում էլ ամենից առաջ նրա պահանջներն են, որ պէտք է աչքի առաջ ունենայ մեր Ընկերութիւնը: 20—25 կոպէկից թանկ չըպէտք է արժէնայ այդ գիրքը:

Պ. Նիկ. Աղբալեանը գտնում է, որ 2500 օրինակը շատ է և անկարելի է այդքան գիրք տարածել մեր իրականութեան մէջ: Չը պէտք է մոռանալ, որ գրքի առաջին տպագրութիւնը միայն այս տարի սպառուեց:

Պ. Աւ. Աբաղաբեանը համակարծիք է պ. Նիկ. Աղբալեանին և գտնում

է, որ առ առաւելն պէտք է 1200 օրինակ տպագրուի: Թիֆլիսի բարբառը արդէն մեռնում է և մի քանի տարուց յետոյ այլ ևս շատ քիչ մարդ կըլինի, որ այդ բարբառը կարողանայ հասկանալ:

Պ. Գառնիկեանը ցանկալի է համարում Վարչութեան ծրագրած երկու հրատարակութիւնները՝ ժողովրդականն ու գիտականը միացնել և մի ընդհանուր հրատարակութիւն անել:

Պ. Ռուբէն Խանաթեանը առաջարկում է ընտրել չըտպագրուած երգեր եղած ձեռագիրներից և կցելով դրանք Հախվերդեանի հրատարակութեան մէջ եղած երգերին լոյս ընծայել բազբքով հանդերձ:

Պ. Մակար Չմեկեանը կարծում է, որ պէտք է 2500 օրինակ տպագրել. համոզուած լինելով որ ժամանակի ընթացքում այդ բոլորը կըտարածուի: Իսկ եթէ մինչև այժմ շատ դանդաղ են վաճառուել Սայեաթ-Նովայի աշխատութիւնները, պատճառն այն է, որ շատ քչերն էին ճանաչում այդ տաղանդաւոր երգչին:

Պ. Գր. Վաղանեանը նոյնպէս այն կարծիքի է, որ պէտք է 1200 օրինակ տպագրել, միայն այնպիսի գին նշանակել վաճառքի համար, որ դրանից գոյացած գումարով կարելի լինի միայն ծախսերը հոգալ:

Պ. Խոսիկեանը կարևոր է համարում բառգիրքը տպագրել ոչ թէ գրքի վերջում, այլ իւրաքանչիւր երգից յետոյ դնել այդ երգի մէջ եղած անհասկանալի բառերը իրենց անհրաժեշտ բացատրութիւններով: Այդ ձևով աւելի դիւրացրած կը լինենք ընթերցանութեան գործը, ասում է պ. Սոստիկեանը:

Պ. Իսահակ Յարութլեանը կարծում է, որ ընդհանուր ժողովը ներկայ պարագաներում շատ էլ չըպէտք է մտնի այդ հրատարակութեան բովանդակութեան մանրամասն քննութեան մէջ: Ընկերութիւնն ինքը այս դէպքում իր միջոցներից ոչինչ էլ չի ծախսում. կազմակերպուել են երեկոյթներ, գոյացել է որոշ գումար և այդ գումարն է, որ պէտք է գործադրուի հրատարակութեան համար:

Պ. Լեօն գտնում է, որ պէտք է 2500 օրինակ տպագրուի, մանաւանդ որ այդ դէպքում գրքի իւրաքանչիւր օրինակը համեմատաբար արժան կը նստի. ուստի և հնարաւոր կը լինի աւելի ևս մատչելի դարձնել ժողովրդին:

Պ. Յակ. Աղաբաբեանը նոյնպէս 2500 օրինակ տպագրելու կողմնակից է, գտնելով որ հէնց այդպիսի հրատարակութիւններն են, որ համեմատաբար մեծ քանակութեամբ տարածուում են մեր ժողովրդի մէջ:

Պ. Յովհաննէս Թումանեանը յայտնում է՝ ժողովին, որ այլ և այլ վայրերից արդէն իսկ պահանջներ կան այդ հրատարակութեան, այնպէս որ կարծում է, որ լաւ կը տարածուի:

Պ. Միգաս Բերբեքեանը ամփոփելով ժողովում արտայայտուած բոլոր կարծիքները, քուէարկում է.

ա. Լաւ թէ՛ միջակ թղթի վրայ տպագրել այդ գիրքը.

Ընդհանուր ժողովը որոշում է լաւ թղթի վրայ տպագրել:

բ. 2500 թէ՛ 1200 օրինակ տպագրել.

18 ձայնով ընդդէմ 9-ի որոշում է 2500 օր. տպագրել:

Այս քուէարկութիւնից յետոյ պ. Նիկ. Աղբալեանի առաջարկութեամբ ժողովը ցանկութիւն է յայտնում, որ այդ հրատարակութեան վաճառումից գոյացած գումարը չըծախսուի ընթացիկ պէտքերի համար, այլ պահուի նման նպատակների համար:

Վարչութեան նախագահը զեկուցում է ժողովին, որ Վարչութեան նիստերի մի քանի արձանագրութիւններ, որոնք կազմուել են պ. Ե. Լալայեանի ձեռքով՝ Վարչութեան քարտուղար հայր Աղանեանի թիֆլիսից բացակայ եղած ժամանակ, մինչև այժմ պահուում են պ. Լալայեանի մօտ, չընայած որ մի քանի անգամ ղրմուել է այդ մասին: Պ. Լալայեանը ոչ միայն արձանագրութիւնները չի վերադարձրել, այլ նոյն իսկ անպատասխան է թողել Վարչութեան բոլոր ղրմումները: Ընդհանուր ժողովին է ղրմում՝ միջոցներ գտնելու այդ կարևոր արձանագրութիւններն ստանալու համար:

Ընդհանուր ժողովի նախագահը՝ նոր կըքելը չըլուզելու նպատակով՝ առաջարկում է կորած համարել այդ արձանագրութիւնները, մանաւանդ որ առանձին նշանակութիւն չունեն դրանք Ընկերութեան համար:

Պ. Մակ. Չափեանը առաջարկում է մի յանձնաժողով ընտրել և յանձնարարել նրան Ընդհանուր ժողովի անունից պահանջել պ. Լալայեանից այդ արձանագրութիւնները:

Պ. Խ. Բաբայեանը առաջարկում է դատարանի ղրմել:

Պ. Գասպար Իփեկեանը նպատակայարմար է համարում յանձնարարել Ընդհանուր ժողովի նախագահին՝ խօսել պ. Լալայեանի հետ և ստանալ արձանագրութիւնները:

Պ. Արե. Յարութիւնեան առաջարկում է Ընդհանուր ժողովի անունից պ. պ. նախագահի ու քարտուղարի ստորագրութեամբ մի գրաւոր ղրմում անել պ. Ե. Լալայեանին և պահանջել նրանից արձանագրութիւնները:

Պ. Նախագահը քուէարկում է.

ա. Դիմել պ. Լալայեանին թէ հրաժարուել արձանագրութիւններից.

20 ձայնով ընդդէմ 6-ի որոշում է ղրմել:

բ. Գրաւոր ղրմում անել թէ խօսել հետը.

Դիմումի այս երկու ձևերն ևս հաւասար թուով ձայներ են ստանում, այնպէս որ ոչ մէկը անցած չի համարում: Վիճարանութիւնները նորից շարունակուում են այդ հարցի շուրջ և երկրորդ անգամ քուէարկելով՝

15 ձայնով ընդդէմ 11-ի որոշում է խնդրել պ. նախագահին անձամբ տեսնուել պ. Ե. Լալայեանի հետ և վերջ տալ այդ չարաբաստիկ խնդրին:

Վարչութեան նախագահը ցանկալի է համարում լսել ժողովականների կարծիքներն այն մասին, թէ ինչպէս պէտք է պաշտպանել հեղինակի իրաւունքներն ու շահերը՝ համաձայն Ընկերութեան կանոնադրութեան:

Պ. Ա. Արաւաւեանի առաջարկութեամբ Ընդհանուր ժողովը այս ժողովին վաղաժամ է համարում այդ հարցով զբաղուելը և յանձնարարում է Վարչութեանը խորհրդակցել իրաւաբանների հետ և հետեւալ Ընդհանուր ժողովին մանրամասն զեկուցում ներկայացնել այդ հարցի մասին:

Վերջում զեկուցում է, որ Վարչութեան անդամներից 3 հոգի՝ պ. պ.

Երուանդ Լալայեանը, Տիգրան Յովհաննիսեանը և բժ. Ար. Զարգարեանը այլ և այլ պատճառներով հրաժարուել են Վարչութեան անդամութիւնից, որոնց փոխարէն անհրաժեշտ էր համարում նոր անդամներ ընտրել, մանաւանդ որ հրաժարողների մէջ է նաև Ընկերութեան գանձապահը, որի վրայ Ընդհանուր ժողովն է գանձապահի պարտականութիւնը դնում:

Պ. Արե. Յարութիւնեանը առաջարկում է Վարչութեան անդամների լրացուցիչ ընտրութիւնները ետաձգել մինչև մարտ ամիս, և այն ժամանակ միանգամից ընտրել ամբողջ Վարչութիւնը:

պ. Ա. Լիսիցեանը ցանկալի է համարում Վարչութեան լրացուցիչ անդամներին ընտրել միայն երկու ամսով, որից յետոյ Ընդհանուր ժողով գումարել և ամբողջ Վարչութիւն ընտրել:

պ. Ար. Արեգեանը կանոնադրութեան տեսակէտից անընդունելի է համարում պ. Լիսիցեանի առաջարկը, որովհետև այդ կանոնադրութեան XXIV յօդուածի համաձայն Վարչութեան անդամներն ընտրուում են 2 տարով:

պ. Ա. Արաւաւեանը կարծում է, որ կանոնադրութեան XXIV յօդուածը չի կարելի ներկայ դէպքում կիրառել, որովհետև ներկայումս ոչ թէ ամբողջ Վարչութիւնն է ընտրուում, այլ նրա միայն մի քանի անդամները, որոնք պէտք է պաշտօնավարեն այնքան ժամանակ, որքան պէտք է պաշտօնավարէին այն անդամները, որոնց փոխարինում են նրանք:

Նիկ. Աղբալեանը շփոթութիւնից խուսափելու համար առաջարկում է ընտրութիւնը ետաձգել մինչև մարտ:

պ. Յովհ. Թումանեանը անհրաժեշտ է համարում այժմ իսկ կատարել լրացուցիչ անդամների ընտրութիւնը, որովհետև աշխատող ձեռքեր խիստ պակասում են Վարչութեան մէջ:

Ձայների մեծամասնութեամբ որոշում է հէնց այժմ ընտրել Վարչութեան լրացուցիչ անդամներին մինչև առաջիկայ տարեկան ընդհանուր ժողովը, երբ կընտրուի ամբողջ վարչութիւնը:

Ընկերութեան գանձապահի պարտականութիւնը դրւում է պ. Յակոբ Ալիսանեանի վրայ, որը իբրև փոխանգամ փոխարինել էր Վարչութեան հրաժարուած անդամներից մէկին: Այնպէս որ անհրաժեշտ էր միայն 2 անգամ ընտրել Վարչութեան համար:

Եղած թեկնածուներից գաղտնի քուէարկութեամբ Վարչութեան անդամներ են ընտրուում.

1. պ. Նիկողայոս Աղբալեան 22 ձայնով ընդդէմ 1-ի և

2. պ. Մինաս Բերբերեան 21 ձայնով ընդդէմ 2-ի:

Իսկ Վարչութեան փոխանդամներ ընտրուեցին.

1. պ. Արշակ Ղազարեան 17 ձայնով ընդդէմ 6-ի

2. պ. Գասպար Իփեկեան 16 » » 8-ի

3. պ. Ռուբէն Խանաղաղեան 15 » » 8-ի:

Ժողովը, շնորհակալութիւն յայտնելով Ընդհանուր ժողովի նախագահին, ցրւում է ժամը 3-ին:

Նախագահ՝ Մինաս Բերբերեան

Քարտուղար՝ Գար. Գարդիսեան

Կովկասեան Հայ Գրողների Ընկերութեան 1913 թ. դեկտեմբերի 15
արտակարգ Ընդհանուր Ժողովի:

Ընկերութեան Նախագահ Յով. Թումանեան բանալով ժողովը առաջարկում է ընտրել ժողովի նախագահ. ձայների մեծամասնութեամբ ժողովի Նախագահ է ընտրուում Գրիգոր Վարդանեանը, Քարտուղար Վարդգէս Ահարոնեան:

Նախագահը ըստ սովորութեան առաջարկում է նախ դիմել նոր անդամների ընտրութեան. գաղտնի քուէարկութեամբ ընտրուում են նոր անդամներ:

Վահան Տէրեան	15 սպիտակ	1 սև:
Մարկոս Վարդանեան (Ռէն)	13 »	2 »
Բարսեղ Շահպաղ	15 »	1 »
Յակ. Մելիք Բախտամեան	10 »	5 »
Օր. Ն. Աղանեան	15 »	0 »
Գարեգին Սարգսեան	10 »	5 »

Այնուհետև ժողովի Նախագահը առաջարկում է դիմել Ընկերութեան Գանձապահի ընտրութեան:

Յով. Թումանեան յայտնում է որ անցեալ ժողովում գանձապահ է ընտրուած եղել պ. Ա. Ալիխանեանը, բայց այժմ՝ նա անակնկալ կերպով մի նոր պաշտօն է ստացել և ստիպուած է եղել հրաժարուել, ուստի պէտք է կամ մի նոր գանձապահ ընտրել կամ Ընկերութեան Վարչութեան անդամներից մէկի վրայ դնել գանձապահի պաշտօնը:

Լեօն յիշում է որ անցեալ ժողովում որոշուած է եղել որ ամեն մի հեռացող Վարչութեան անդամի տեղը բռնում է փոխ անդամը. բացատրում է նաև որ, Վարչութիւնը իր անդամներից մէկի վրայ կարող է դնել գանձապահի պաշտօնը:

Յով. Թումանեանը թուելով Վարչութեան բոլոր անդամների անուշները գտնում է որ նրանցից ոչ մէկը հնարաւորութիւն չունի այդ պաշտօնը ստանձնել:

Ա. Արամասեանը և միւսները առաջարկում են գանձապահի պաշտօնը դնել Ա. Ղազարեանի կամ հ. Գիւտ ա. ք. վրայ—երկուսն էլ հրաժարուում են, առաջինը զբաղուած լինելով, իսկ երկրորդը իբրև ընկերութեան քարտուղար անկարելի է գտնում նոր պաշտօն էլ ստանձնել:

Լեօն առաջարկում է ընտրել մի նոր փոխանդամ և նրա վրայ դնել այդ պաշտօնը: Գիւտ քահ. Աղանեանը գտնում է որ դա դէմ է Ընկեր. կանոնադրութեան 22-րդ կէտին:

Յ. Թումանեան յիշեցնում է որ Բարեգործական ընկեր. կանոնադրութեան մէջ կայ մի համապատասխան կէտ և առաջարկում է ընտրել մի նոր փոխանդամ որի վրայ դնել գանձապահութիւնը «մինչև առաջիկայ ընդհա-

նուր ժողովը». Իփէկեանը նոյն միտքն է պաշտպանում: Հայր Գիւտը պընդում է որ դա դէմ է կանոնադրութեան և խնդրում է մտցնել արձանագրութեան մէջ:

Ժող. Նախագահը քուէի է դնում—սլ է համաձայն ընտրել մի նոր անդամ Վարչութեան—առաջարկը անցնում է 15 ձայնով ընդէմ 1-ի:

Գ. Իփէկեանը յայտարարում է որ ժողովը կվորում չունի, որովհետև ժողովը բանալուց յետոյ շատերը հեռացել են, ուստի և ընտրութիւն կատարել չի կարելի:

Լեօն առարկում է որ ժողովը բանալիս կվորում կար, ուստի ժողովը օրինաւոր է: Նախագահը քուէի է դնում—սլ է համաձայն Իփէկեանի կարծիքի հետ որ ժողովը բանալուց յետոյ կվորումը պակսել է ուստի ժողովը ապօրինի է. ժողովը 11 ձայնով ընդդէմ 4-ի չի համաձայնում Իփէկեանի հետ:

Նախագահը առաջարկում է դնել Վարչութեան նոր անդամի համար թեկնածուներ. առաջարկում է Արովեանի, Ա. Ղազարեանի, հ. Ճուղուրեանի և Վ. Ահարոնեանի թեկնածութիւնը—Արովեանից բացի բոլոր միւսները հրաժարուում են: Արովեանը ընտրուում է գաղտնի քուէարկութեամբ՝ 13 սպիտակով ընդդէմ 5 ձեռնպահ մնացողների, Վարչութեան անդամ և գանձապահի պաշտօնը ժողովը դնում է նրա վրայ:

Այնուհետև Յով. Թումանեանը քննութեան է դնում Ընկերութեան զբաղման երեկոների արձանագրութիւնների խնդիրը և բացատրում է որ մամուլը չի կարողանում ճշտութեամբ արձանագրել Ընկերութեան երեկոյթներում տեղի ունեցած անց ու դարձը. ցանկալի է գտնում որ դասախօսութիւնները և վիճաբանութիւնները տպագրուին, գուցէ դրա համար Վարչութիւնը հնար գտնի ունենալ մի քարտուղար որ գրի առնի երեկոյթներում տեղի ունեցածը ճշտութեամբ:

Քուէարկում է Վարչութեան առաջարկը՝ ունենալ քարտուղար երեկոյթները գրի առնելու համար՝ որ անցնում է միաձայն:

Պ. Վրոյրը առաջարկում է քարտուղարի փոխարէն հրաւիրել մի սղագրի: Դեմիւրճեանը նոյն կարծիքին է, գտնելով որ 3—4 բուբով չի կարելի գտնել բաւականաչափ զարգացած մի քարտուղար որ կարողանայ ճիշտ կերպով արձանագրել երեկոյթները, մինչդեռ այդ վարձատրութեամբ կամ մի քիչ աւելի կարելի է սղագիր վարձել որ մեքենայի ճշտութեամբ իր գործը կը կատարի:

Զմեկեան և Վարդապետեանը դէմ են այդ առաջարկներին որ կարող է ահապի ծախս պահանջել Ընկերութեան կասսայից:

Ա. Արամասեանը գտնում է որ չարժէ այդքան մեծ արժէք տալ Ընկ. երեկոյթներում ասած և խօսածներին և դրա համար յատուկ սղագիր պահել: Ամեն մի դասախօս պարտաւոր է գրի առնել իր ասածները և տալ տպագրութեան:

Յ. Թումանեանը առարկում է որ Աթանասեանի առաջարկը ինքը Վարչութիւնը բայց չի անցել:



Նախագահը գտնում է որ Վարչութիւնը այս հարցը աւելի ուսումնասիրած բերէր Ընդհանուր ժողովին, և առաջարկում է յանձնարարել Վարչութեանը 3—5 բուրլու սահմաններում վարձատրութեամբ սղագիր հրաւիրել:

Աթանասեան եւ Վարդապետեանը առաջարկում են պարտաւորեցնել ամեն մի դասախօսի գրի առնել իր դասախօսութիւնը և յանձնել Վարչութեանը, հակառակ դէպքում հօնօրար չը վճարել դասախօսին:

Հ. Գիւն Աղանեանը եւ Լեօն առարկում են դրա դէմ, որ ոչ ոք չի համաձայնի իր օրերի երբեմն շաբաթների աշխատանքի արդիւնքը 10 բուրլով ծախել Վարչութեանը:

Բացի դրանից Գեմիւրեանը գտնում է որ դասախօսը շատ յաճախ շեղւում է իր ծրագրից, ուստի անկարելի է պահանջել նրանից որ նա իր սահմանների ճշգրիտ պատկերը գրի առնի և տայ. պէտք է քարտուղար կամ սղագիր ունենալ:

Մամուլի մէջ դասախօսութիւնների ճշգրիտ պատկերը ներկայացնելու անհրաժեշտութիւնն են պաշտպանում նաև Յով. Թումանեան և Ա. Ղազարեան, որից յետոյ նախագահը ի նկատի առնելով որ ոչ ոք չի վիճում սղագիր կամ քարտուղար ունենալու դէմ, առաջարկում է տալ Ընկերութեան Վարչութեանը լիազօրութիւն որ նա իր միջոցների սահմաններում կազմակերպի այդ բանը մինչև առաջիկայ բիւջետային տարին—առաջարկը ընդունւում է միաձայն:

Այնուհետև նախագահը հերթի է դնում պ. Մ. Չմշկեանի առաջարկները.

1. Հանգուցեալ Ա. Արասխանեանի և Գ. Բարխուդարեանի գերեզմանների վրայ տապանաքար կամ արձան դնել:

2. Չեռք բերել մի հողաբաժին Խօջիվանքի գերեզմանատանը հայ հասարակական գործիչներին թաղելու համար:

3. Հիմնել կլուբ Ընկերութեան անդամների համար:

Բժ. Մինասեանը հարց է դնում թէ ինչ կարծիք ունի ինքը Վարչութիւնը այդ առաջարկների վերաբերմամբ:

Ընկերութեան նախագահը՝ Յով. Թումանեանը բացատրում է.

1. Վարչութիւնը գտել է որ գրողներին և հասարակական գործիչներին թաղելու համար հող ունենալը տամնակ հազարների խնդիր է, ուստի Վարչութիւնը չի էլ կարող այդ խնդիրը քննութեան առնել:

2. Ընկերութեան ուժերից վեր է բոլոր վաստակաւոր գործիչների գերեզմանները արձաններով զարդարել. Ընկերութիւնը արդէն ձեռնարկել է Աղայեանի արձանի գործը և աւելին չի կարող անել:

3. Ինչ վերաբերում է յատկապէս Ընկերութեան անդամների համար երեկոյթներ կազմակերպելուն, Վարչութեան մէջ արդէն այդպիսի մի առաջարկ եղել է:

Հ. ձուլուրեանը գտնում է անյարմար որ Ընկերութիւնը գրողի գերեզմանի վրայ արձան կանգնեցնի—այդ պիտի ժողովուրդն անի:

Աթանասեանը գտնում է որ Բարխուդարեանը յարգելի գրող լինելով

հանդերձ անմիջական կապ չունի Ընկերութեան հետ, մինչդեռ Արասխանեանը Ընկեր. հիմնադիրներից մէկն է և առաջարկում է դիմել Արասխանեանի հարուստ ազգականներին, որ նրանք մի բան անեն: Ինչ վերաբերում է երեկոյթներին առաջարկում է Ընկերութեան երեկոյթներէ մէկը նուիրել Ընկերութեան անդամների ինտիմ հաւաքոյթներին, իսկ միւսը թողնել սովորական դասախօսութիւնների համար:

Լեօն գտնում է անյարմար թաղումների և տապանաքարների հետ կապւած մի հարց բերել և դնել Ընկ. առաջ. խնդիրը մի 20 բուրլանոց քար է որ պիտի դնել Արասխանեանի գերեզմանի վրայ: 60 — 70 հազար բուրլի թաղելու համար ծախսելու փոխարէն աւելի լաւ է ծախսել գրողներին ապրեցնելու համար: Անհնար է գտնում հիմնել այն կլուբը, որի մասին խօսւում է այստեղ, որովհետև դա ահագին ծախքեր կը պահանջի:

Բժ. Մինասեանը գտնում է, որ պիտի աւելի լուրջ դասախօսութիւններ կազմակերպել. պիտի աշխատել, որ դասախօսները աւելի լրջօրէն ուսումնասիրեն իրենց նիւթերը:

Գ. Իփեկեանը նոյն միտքն է պաշտպանում և աւելացնում է որ աշակերտութիւնը շատ տեղ է գրաւում Ընկերութեան երեկոյթներին, իսկ այդ հանգամանքը խանգարում է ազատ արտայայտուելու:

Ա. Ղազարեանը առարկում է դրա դէմ. Ընկերութեան երեկոյթները լաւ սկսուած են և բնական ճանապարհով կը ընթանան. ցանկալի է աշակերտութեան թիւը սահմանափակել բարձր դասարաններով:

Նախագահը մի ճշտում է մտցնում կլուբի շուրջը տեղի ունեցող վիճաւորութիւնների մէջ. նպատակայարմար է, որ ժողովրդի համար կազմակերպուող երեկոյթներից բացի կազմակերպուեն աւելի ինտիմ հաւաքոյթներ Ընկերութեան անդամների համար: Ինչ վերաբերում է մահարձաններին, նրանք իրենց որոշ կրթիչ գերը ունին:

Բժ. Աղասաբեանը անյարմար է գտնում երեկոյթների ընդունուած ձևը փոխել, պէտք է միայն նրանց աւելի հետաքրքրական դարձնել: Գալով Արասխանեանի արձանին առաջարկում է մի երեկոյթ նուիրել Արասխանեանի անուանը և ապա այդ առթիւ դիմել Արասխանեանի ազգականներին, որոնք երեկ չեն մերժի մի բան անել:

Օր. Ա. Տիգրանեան գտնում է որ աշակերտների թիւը սահմանափակելու փոխարէն աւելի լաւ կը լինէր որ դասախօսները և վիճողներն աւելի զուսպ լինէին իրենց արտայայտութիւնների մէջ, դա պէտք է ոչ միայն աշակերտների այլ և մեծերի համար:

Յով. Թումանեան—անյարմար է գտնում, որ Ընկերութիւնը իր վրայ վերցնի Արասխանեանի մահարձանի գործը, որովհետև Արասխանեանի թէ թաղման, թէ ժառանգութեան ուրեմն և մահարձանի խնդիրը վերցրել է իր վրայ Արասխանեանի ազգականը, որին յիշեցնել այդ մասին անյարմար է: Երեկոյթ Արասխանեանի անուանը կը կազմակերպենք եթէ դասախօս գրտնուի: Գալով Ընկերութեան անդամների համար երեկոյթներին գտնում է մի շարք անյարմարութիւններ, որոնք խանգարում են այդ անել. եթէ ժո-

դովը որոշի առանձին դահլիճ վարձել այդ նպատակի համար մենք ուրախութեամբ կը կազմակերպենք երեկոներ: Ինչ վերաբերում է Ընկերութեան երեկոյթներում վիճաբանութեան ձևին, գտնում է որ քրոպէով խօսողների ժամանակը սահմանափակելը չի խանգարում արտայայտուելու, եթէ խօսողը ասելիք ունի, նրան միշտ աւելի ժամանակ է տրւում: Չի կարելի ընդհանրապէս կառաւարդ սահմանափակել խօսողների թիւը որոշ օպպոնենտներով, որովհետեւ այդ դէպքում հասարակութիւնը դժգոհ կը լինի թէ նրան արտայայտուելու, վէճին մասնակցելու հնարաւորութիւն չեն տալիս: Աշակերտութեան համար չի կարելի փակել Ընկերութեան դռները, աշակերտութեան ներկայութիւնը կը զսպի խօսողներին և կը ստիպի աւելի կիրթ լինել:

Արքանաւան—նոյնպէս անհրաժեշտ է գտնում հիմնել մի կլուբ Ընկերութեան անդամների համար, դրա համար առաջարկում է ձեռքի տակ եղած ներքին յարկի երկու սենեակներում սարքել այդ երեկոյթները: Ոչ անդամների համար երեկոյթներում սահմանափակել աշակերտների թիւը:

Նախագահը քուէի է դնում Ընկերութեան անդամների համար երեկոյթներ ունենալու առաջարկը:

Ընկերութեան երեկոյթները հինգշաբթի օրերը պահել անխախտ, իսկ երկու շաբաթը մի անգամ կազմակերպել մի երեկոյթ Ընկերութեան անդամների համար. այս առաջարկը անցնում է միաձայն:

Բացի դրանից առաջիկայ տօներին մի տօնածառ կազմակերպել Ընկերութեան անդամների ընտանիքների համար.—անցնում է միաձայն:

Ժողովը փակւում է ժամը 11-ին:

Քարտուղար՝ Վ. Ահարոնեան:



ՀՀ Ազգային գրադարան



N 0122120

